

ԳՐ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՅԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ
ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ԻՐԵԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Առանձնահատիք Հայկական ՍՈՅ Գիտուրյունների Ակադեմիայի
1949 թ. № 2 «Տեղեկագրից»

891.99 (09)

27576

9-89 1 Григорьевич, Г

Հայոց գրական լեզվի միանդիքը կերպարվել ու պատճենվելու ...

891.99(09)

Գ-89

Գր. Գրիգորյան

ԽՍՀՄ ՎՐԱ Հ 1949 թ.

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԵՐԻ ՄԻ ՔԱՆԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՈՒ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ
ԻԴԵԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

II
30996
A

I

«Սասնա Շռեր» վեպը խորապես ժողովրդական ստեղծագործություն է: Սրանից հետևում է, որ նրա համար բնորոշ արտահայտչական բոլոր միջոցները պետք է արտացոլեն այն, ինչ ապրել ու ինչին ձգտել է ժողովուրդը: Եվ իրոք, տեսնում ենք, որ ընդհանրացած գեղարվեստական պատկերները արտացոլում են ինչպես ժողովրդի հասարակական կյանքը, ներկայի ու ապագայի նկատմամբ նրա ունեցած հայացքը, ցանկություններն ու իդեալները, այնպես էլ նրա դարավոր կենսափորձի արդյունք հանդիսացող այն մտքերն ու դադափարները, որոնք ապրել ու զգացել են նաև ներքին ու արտաքին թշրիմիների դեմ մղված տեսական պայքարում:

Վեպի այս կամ այն պատկերն ու կերպարն ընդհանրացնող ուժ է ստացել հենց այն պատճառով, որ իր մեջ կայունացրել, թանձրացրել է հիշյալ երեսույթներից մեկն ու մեկը, և այդ ոչ միանգամից, այլ աստիճանաբար: Հակառակ ալեգորիկ պատկերների՝ ստանալով միանգամայն ինքնուրույն բովանդակություն, գլխավոր կերպարներն ու պատկերները դուրս են գալիս որոշ ժամանակի ու քարտեզի շրջանակներից, դառնում են համաժողովրդական: Արարական հարկահանների առաջ ծունկի եկած Հովանի և արցունքով ոսկին շափելու պատկերը գեղարվեստական ընդհանրացում է ոչ այն պատճառով, որ տալիս է արաբների կողմից սասունցիների կամ Սասնա տան հարստության կողոպուտը, այլ այն պատճառով, որ նրա միջոցով տրվում է 9-րդ դարում, նրանից առաջ և հետո բազմաթիվ օտար զավթիչների կողմից հայ ժողովրդի հարստության կողոպտման և նրա դարավոր ստրկության պատկերը: Այդ ֆոնի վրա բարձրացող Դավթի դյուցազնական կերպարը մեծանում է ոչ այն պատճառով, որ արտացոլում է նույն հարկահանների դեմ սասունցիների՝ մղած հերոսական կոիվը, այլ այն պատճառով, որ արտացոլում է 9-րդ դարում, նրանից առաջ և հետո, սոցիալական ստրկության կապանքներից ազատվելու համար իր թշրիմիների դեմ ազատատենչ հայ ժողովրդի մղած դարավոր դյուցազնական կոիվը: Այսպիսով, գրանք հանդես են գալիս իրու ընդհանրացած պատկերներ և հետեւապես ունեն ավելի լայն ու խոր իմաստ, քան երեսում են առաջին հայացքից: Այս բանում կհամոզվենք վեպի մի քանի կերպարների ու պատկերների մանրամասն քննությունից հետո:

Սկսենք առաջիններից՝ կերպարներից:

1. Վեպի «Սանասար և Բաղդասար» ճյուղը բովանդակությամբ և դեպքերի զարգացման տեսակետից հիմնականում բաժանվում է երկու մասի: Առաջին մասում տրվում է նրանց ջրային ծննդի պատմությունը, վախուսար կուապաշտ

— Ես սիվ փանջառեք, սա ամարաթներ կը տիսնա՞ս,—
Թագավորի աղջկան բնակարանն ի.
Կտիսնա՞ս էդ սիվ հիրդիսնիր:

Թագավորից և Սասնա բերդի կառուցումը: Երկրորդ մասում երկու եղբայրների ամուսնության պատմությունը, որը զուգորդվում է բնության ուժերի դեմ մղած նրանց հերոսական կովի պատմությանը: Ճյուղի այս երկու մասում իրենց կատարած գործողություններով ու վարքադուվ Սանասարն. ու Բաղդասարը արտացոլում են՝

ա) Մահվան անձնավորված ուժերի դեմ կյանքի համար մղված կոփվը և
բ) Սասնա բերդի (=Հայոց տան) բանաստեղծական հիմնադրումը:
Նախ տեսնենք առաջինը:

Ա.) Ճյուղի երկրորդ մասում ծավալվող հիմնական գործողությունը Քառուն ճող Շամին ազատելու նպատակով ծովում եղած վիշապի և Պղնձե քաղաքի թագավորի դեմ երկու եղբայրների մղած կոփվն է: Մնացած մյուս էպիգոդները այս կամ այն շափով բխում են այդ կովից և սերտորեն առնչվում նրան:

Մեր ժողովրդի նախնական պատկերացմամբ վիշապները եղել են զրի օգտագործումն արգելող ուժեր, վիշապն աղթյուրների ջուրը խափանող ջրարդել է, այդ պատճառով նրանք նստում էին ջրերի, աղբյուրների ակունքի մոտ, կամ հենց ջրի մեջ: Ժողովուրդը ջուր վերցրել է ջրարդել վիշապին ամեն անդամ մի աղջիկ տալու միջոցով:

Ես քաղաք ճուր շկա, ամեն տարի մենք ախճիկ կըտան
Էտ վիշապ ուտի, քաղաք շամփրի,
Ինունք էլ ինոր հախու շեն կենա ճուր պիրի:

«Ս. Ծ.», Ա. 843,

Զուրը արգասավորության, կյանքի սիմվոլն է: Բնական է, որ հակադիր ուժը, տվյալ դեպքում վիշապը, որ արգելակում է նրա օգտագործումը, պետք է հանդես գա և հանդես է գալիս որպես մահվան սիմվոլ: Երկու եղբայրները կովում են վիշապի դեմ և սպանում նրան՝ աղատելով աղջկան մահից, իսկ քաղաքն ավերումից:

Բաղդասար քար ըմ էղար.
Քար պոնեց շանավարին, չիցկեց:
Կանչեց ախաղոր.— Յըմ քար պոնի:
Սանասար էղար շանավարի մե կող կոտրեց.
Քար չկնաց ախաղոր մոտ:
Մոտիսցան քարերով կլոխ ճարտեցին:

«Ս. Ծ.», Ա. 844

Նույն վիշապի ալեգորիան է Պղնձե քաղաքի Բաղավորը, որն իր աղջկան՝ Քառուն ճող Շամին փակել է ապարանքում, որպեսզի ռաղջիկ տուռ չտիսնար:

Թ'ասաց. — Ափո ջան խա:

Ասաց. — Ենի սիվ փառդայ ի կապած հիրդիկներուն,

Որ աղջիկ տուռ շտիւնա:

«Ա. Ծ.», Ա. 149

Սահասարն ու թաղդասարը Քառսուն ձող Շամին տանելու համար կը ուվում են թագավորի դեմ, հանձին նրա գոմշանման 40 «փահլեվանների»: Սրանք նույնպես ջուրը և առհասարակ կյանքն արգելակող վիշապի այլակերպություններն են, նախ՝ որ դոմեշ են համարվում, ճիշտ այնպես, ինչպես վիշապները, որ ներկայացվում են միայն դոմեշի կերպարանքով՝

Մեկ էլ տեսան, որ գըոոց ինգավ սարը,

Իրիշկացին, տեսան՝ մեկ ճոճ ջանավար էկավ.

Մի կոմշի շափ պանցը, խինկ կոմշի շափ երկեն...

«Ա. Ծ.», 844

և ապա Սահասարի դեմ կովի են դուրս գալիս միայն այն բանից հետո, երբ նա Քառսուն ձող Շամին աղատելու նպատակով մտնում է ծովը և քնած վիշապի բերնից հանում «թալիսմա» ունեցող մատանին:

Սահասար գնաց մտավ ծովու տակ

Տիսավ՝ վըշապ գլոխ բարձրացրցիր ի:

Չանգալ վերեվանց էթալ

Վիշապի բերնեն զմատնիք ի խան:

«Ա. Ծ.», Ա. 322

Սահասարի այս գործողությունից հետո բացվում են Քառսուն ձող Շամի արգարանքի «սիվ հերդիսները» և նա որպես լույսի աղբյուր, որպես արև, նայում է աշխարհին:

Խլիսուն ինչ լուս բացվավ, էլան ի՞նչ տեսան. —

Տեսան՝ թագավորի աղջկան՝

Հերդսնիր բացվի, լուս տվիր ի քաղաք:

«Ա. Ծ.», Ա. 150

Այս զայրացնում է թագավորին, որպես որսը ձեռքից փախցրած վիշապ. այդ պատճառով հրամայում է իմանալ, թե ո՞վ է վիշապի բերնից հանել մատանին:

Առավոտ լուս բացվավ, ծով կատղավ

Վըշապ քամի քաղաք կ'ըլնի:

Թագավոր դալալ իտու կանչի՝

— Մըհա՝ ո՞վ մատնիք վըշապը՝ բերնից խանիր ի:

«Ա. Ծ.», Ա. 322

Այսպիսով ինչպես ջրարգել և բանտարկված աղջկա (=արևի) լույսը խափանող կամ ծածկող վիշապները, այնպես էլ թագավորն ու նրա 40 գոմեշ

«Փահլեվանները» մաս սփռող միևնույն ուժի տարբերակներն են։ Բոլոր դեպքերում էլ նրանք արգելակում են կյանքը, կյանքի աղբյուրներ՝ ջուրը և արևը։

Սանասարն ու Բաղդասարը, ինչպես տեսանք, հերոսաբար կովում են այդ ուժերի դեմ և հենց այդ կովով էլ իմաստավորվում, որովհետև վիշապների, թաղավորի և նրա վիշապատեսք «Փահլեվանների» դեմ մի դեպքում ջրի ու բաղաքի, մյուս դեպքում աղջկա (=արևի) համար մղած կոփվը ըստ էռթյան կյանքի կոփվն է մահվան դեմ, լույսի, արևի կոփվը՝ կատաղած «վիշապ քամու», խավարի դեմ։ Իսկ եթե նկատի ունենանք, որ վիշապը փոթորկի, պտուտահողմի և փոթորկալից ամպի անձնավորումն է և որ «Հենց ինքը փոթորիկը, պտուտահողմն ու ամպը մի շար ոգի է, որ սովորաբար օձի (=վիշապի — Գ. Գ.) կերպարանքով է ներկայանում, բայց և զանազան կերպարանքներ է ընդունում, ապա Պղնձե քաղաքում Սանասարի և Բաղդասարի մղած կոփվը կնույնանա վիշապների դեմ Վահագնի մղած կովին, իսկ իրենք՝ վիշապաքաղ Վահագնին։ Եվ ուրեմն, ինչպես Վահագն իր ծնունդով ու արարքներով արտացոլում է լույսի, արևի կոփվը վիշապի՝ փոթորիկի, պտուտահողմի, խավարի ու նրա զանազան այլակերպությունների դեմ, այնպես էլ Սանասարն ու Բաղդասարը իրենց ծննդով ու Պղնձե քաղաքում կատարած գործողություններով արտացոլում են արևի կոփվը խավարի դեմ, կյանքի կոփվը մահվան դեմ։

Բ) Սրանով, սակայն, չի սպառվում երկու հերոսների կերպարների էռթյունը։ Մագումով լինելով ջրածին և «խրեղեն», լույսի, արևի, կյանքի և ազատության համար կոփվ են մղում հենց սկզբից։ Նրանք թշնամի են ամեն տեսակ բռնության։ Բնորոշ է, որ կուապաշտ թագավորին սպանելուց հետո չեն տիրում նրա երկիրը, այլ հեռանում են մի «վիրու տեղ» իրենց տունն, իրենց հայրենիքը հիմնելու նպատակով։ Ամեն տեսակ զավթիչների սրից այն անվթար թողնելու, իսկ հետնորդների համար ազատ կյանք ապահովելու ակնկալությամբ։ Նրանք հարմար տեղ են փնտում։ Մեծ գետը մեջտեղից կիսող ու ապա նրան խառնվող «բարակ», բայց «զորընդեղ» ջուրը դրավում է նրանց ուշադրությունը և հնարավոր դարձնում իրենց մտորումների իրականացումը։ Գտնում են նրա ակոնքը և վրան հիմնում Սասնա բերդը։

Ընկան, ու շատ պըտըտվան։

Զարկեցին, էկան դարիալ երկիր։

Էկան, գացին նեղ ձոր մի։

Տեսան որ՝ գետ մի կիգեր, կ'ընցներ։

Սոու մի ընդիեն կիգեր,

Կզարկեր, մըշ ըդ գետին,

Կը կտրեր զըդ գետ ու կը շերտեր շուրի մեշ տեղ,

Ու հըպա մ'լե կը խառնվեր մեշ ըդ գետին ու կերթեր։

Սանասար Աբամելիքին ասեց,

Թը. — որն որ զըդա ջրի ակ գտնե

Ու զուր տուն լե սուկե վըր իդա ջրին,

Ընդրա ավագ լե որ էղնի՝

Հրմէա զորեղ կեղնի։

Էլան, առան զառուն,

Ու դացին երկու աղբեր։

Դացին ու գտան զաղբուր:

Ըդ աղբրի ջուր՝ լուլե մի ջուր է.

Կիգա կը կտրե թըմամ զուր տկու առուն

Ու հեղ մ՝ լե կդառնա,

Հեղ մ՝ լե կը խառնվի առուն:

Կը նստին վըր ըդ ական,

Ու զուրանց բերդի հիմ կը թապէն:

«Ա. Շ.», Բ 9

Երկու եղբայրների հիմնադրած բերդը, անշուշտ, միջնադարյան հազարավոր բերդերի նման մի բերդ չէ, այլապես այն մեզ համար այսօր ոչ մի արժեք չէր ներկայացնի: Այդ կառուցումն արտացոլող պատկերի խոր իդեական բովանդակությունն ու գեղարվեստական մեծ նշանակությունն այն է, որ արտացոլում է Հայոց տան, հայ ժողովրդի հայրենիքի հիմնադրումը: «Զորընդեղ», «լուլե մի ջրի» ակունքի վրա հիմնված Սասնա բերդը ոչ թե սասունցիների բերդն է, այլ հայ ժողովրդի տունը, ճիշտ այնպես, ինչպես «Սասնա Շոեր» վեպը ոչ թե սասունցիների պատմությունն է, այլ ամբողջ հայ ժողովրդի, նրա կյանքի և իր թշնամիների դեմ մղած հերոսական դարավոր, բայց անախրոնիկ կովի բանաստեղծական պատմությունը: Ինչքան լայն է վերօհնիս ընդգրկում՝ բովանդակության, ժամանակի ու տեղի տեսակետից, այնքան էլ լայն է նրանում պատկերվող այս կամ այն կերպարի ու դեպքի, տվյալ դեպքում բերդի և երկու եղբայրների նշանակությունը, ինչպես վեպը Սասունում ստեղծվելով հանդերձ իր համաժողովրդական նշանակությամբ դուրս է եկել նրա սահմաններից և դարձել նրա կյանքն ու դարավոր պայքարն արտացոլող հայելին, այնպես էլ նրանում պատկերվող բերդը դադարել է լոկ սասունցիների բերդը լինելուց, սասունցիների տունը լինելուց և դարձել է հայ ժողովրդի տունը, նրա պատմական հայրենիքը: Այժմ, քանի որ այն հիմնադրվում է երկու եղբայրների հերոսական շանքերով միայն, ապա պարզ է, որ նրա հիմնադիրներն ամենայն իրավունքով պետք է հանդես գան և հանդես են գալիս, որպես հայ ժողովրդի տան կառուցումն արտացոլող կերպարներ: Սանասարն ու թաղդասարը արտացոլում են Սասնա բերդի՝ հայ ժողովրդի հայրենիքի հիմնադրումը: Նրանք հայ ժողովրդի տան հիմնադրման հիմնադիրներն են:

2. Իդեական տեսակետից անմիջական կապ նկատվում է մի կողմից Սանասարի և թաղդասարի, իսկ մյուս կողմից Դավթի միջև: Եթե Սանասարն ու թաղդասարը իրենց գործողություններով արտացոլում են կյանքի կոփք մահվան դեմ և Սասնա բերդի (=Հայոց տան) բանաստեղծական հիմնադրումը, ապա Սասունցի Դավիթը բացահայտում է՝

Ա.) Հայ ժողովրդի ու բնության հզոր ուժը.

Բ.) մեծագույն դժվարությամբ կառուցված Սասնա բերդի (=Հայոց տան) պաշտպանությունն ու ժողովրդի ազատասիրական դարավոր ձգտումները:

Ա.) Բոլոր հերոսական, վիպական ստեղծագործությունների հիմնական թեման օտար թշնամու դեմ մղված կոփքն է: Այդ կովում մոքիլիզացվում են ժողովրդի հոգեւոր և ֆիզիկական կարողությունները, որոնք «գուրգի», թրի կամ «թուր կայծակի» միջոցով ու նրանց հզորությամբ իջնում են թշնամու գլխին:

Իսկական ժողովրդական հերոսավեպերում ժողովուրդն ինքն է տնօրինում իր բախտը և իր արյան գնով պաշտպանում իր հայրենիքն ու իր ինքնությունը: Բայց նա անմիջականորեն դրեթե չի երևում: Ինչպես մյուս, այնպես էլ հատկապես թշնամու դեմ մղվող կոփվը արտացոլող պատկերներում և էպիգողներում, երևում են մեկ կամ մի քանի անհատներ, որոնց մեջ էլ վճռական դերը տրվում է միայն մեկին: Ժողովուրդն իրեն մարմնավորում է անհատի մեջ և նրան վերագրում իր բոլոր լավագույն հատկությունները: Ընդհանուրը մասով, ամբողջը անհատով արտահայտելու այս ձևարկը հերոսավեպի ժանրային բնորոշ առանձնահատկություններից մեկն է: «Սասնա Շոեր»-ին, որպես խորապես ժողովրդական հերոսավեպի, նույնպես բնորոշ է այդ առանձնահատկությունը: Սասունցի Դավիթը մեր վեպում հանդես չի գալիս որպես մի անհատ Դավիթ: Նա իր հայրենիքի թշնամիների դեմ մարտնչած բազմաթիվ դավիթների և հայ ժողովրդի ամենանվիրական իդեալների ու հզորության մարմնացումն է: Դավիթը հայ ժողովուրդն է: Եվ հենց այդ է պատճառը, որ թշնամու դեմ մղված կոփի պատկերներում տեսնում ենք ոչ թե ժողովրդին, այլ Դավիթին: Դավիթին վերագրված ուժը այդ ժողովրդի ուժն է, թշնամու գլխին իջեցրած շեշտակի կայծակնային հարվածը՝ ժողովրդի հարվածն է: Դավիթի ուժի անխորտակելիության մասին ժողովրդի ունեցած գաղափարը՝ իր ուժի անխորտակելիության մասին ժողովրդի ունեցած պայծառ լավատնսությունն է:

Պետք է նկատել, որ ժողովուրդը իրեն Դավիթի մեջ մարմնավորելով հանդիրձ, շարունակ հետեւել և ուղղություն է տվել նրան նրբեմն Զենով Հովանի, երբեմն Քեռի Թորոսի, իսկ երբեմն էլ պառավ կնոջ միջոցով: Այստեղ երկուրդական նշանակություն ունի Հովանի, Քեռի Թորոսի և պառավ կնոջ ազգակցական կապը: Այդ վիպական դիմ է և հատուկ բոլոր ժողովրդական վեպերին: Աքիլեսին խորհուրդ են տալիս աստվածները և կոփի ամենադժվար մոմենտներում փրկում նրա կյանքը, Դավիթին էլ խորհուրդ են տալիս և ծանր փորձություններից փրկում՝ Հովանը, Թորոսը և պառավ կինը: Դավիթի կապը այդ կերպարների հետ, որպես ժողովրդի ներկայացուցիչների՝ խիստ սերտ է: Ինչպես Անթեյը ամեն անգամ մայր հողին շփմբելով դառնում էր հզոր և անպարտ, այնպես էլ Դավիթը մայր ժողովրդի՝ ներկայացուցիչների հետ շփմբելով, նրանց խրատներն ու խորհուրդները կատարելով ամենածանր փորձություններից դուրս էր գալիս հաղթանակած: Բազմաթիվ փաստեր հիմք են տալիս ենթադրելու, որ եթե շլինեին Հովանը, Քեռի Թորոսը և պառավ կինը, դժվար թե Դավիթը հաղթանակեր թշնամիների դեմ մղված կովում:

Դավիթին ուժ է տալիս նաև սխմվոլիկ «Մարտնիք բանձր Աստվաբածինը»: Այժմ, ի՞նչ ուժ է դա: Խոր հնում, մոտավորապես անիմիզմի շրջանում, երբ մեռնում էր հասարակական այս կամ այն եամբակցության մեծը, ոչ համարվում էր նախահոր փոխանորդը, հետնորդները թաղում էին անպայման մի բարձր տեղ՝ բլուրի կամ սարի վրա, որպեսզի նրա «Ճախրող» հոգին հսկի իրենց անդորրությունը և վտանգի պահին ուժ տա իրենց կամ անձամբ մասնակցի թշնամու դեմ մղվող կովին: Հույների մոտ նախնիների հոգին նույնիսկ զորքի գլուխն անցած կովել է պարսիկների դեմ: Նախնիների «Հոգիները մասնակցում են կոփիներում և կովում նրանց (հետնորդների — Գ. Գ.) համար: Հույները Մարտինյան և Սալամինյան ճակատամարտի ժամանակ տեսել են, թե

ինչպես Տեղեի հոգին զորքի գլուխն անցած կռվել է պարսիկների դեմ»:¹ Նախնին, որ հետագայում վերածվել է ավելի ոմիվերսալ հավատքի՝ աստծու, երբ չի օդնել հետնորդներին, վերցրել են և վորխարենը դրել են նոր աստված: Այսպես, օրինակ՝ «Հոռմաեցիները փյունիկյան երկրորդ պատերազմի ժամանակ հրամայեցին Պեսսինուտայից բերել Կիրիլի արձանը: Իրը թե Փոքը Ասիայից բերած այդ աստվածը օդնեց նրանց պաշտպանվելու Հանիբալից»:² «Մարութա բանձր Աստվարածին»-ի «բանձր» էպիտետը, Մարութա սարի վրա նրա գտնվելու փաստն ու Դավիթի կյանքում ունեցած վճռական դերը հիմք են տալիս ասելու, որ նա նույնպես հետնորդներին թշնամուց պաշտպանող աստվածացած նախնի է: Վեպի մի քանի վարիանտներում այդ աստիճանին է հասել նույնիսկ մեծ Մհերը: Նա նույնպես թաղվում է բարձր սարի վրա: Նրա դերեղմանը «Կանաչ-կարմիր» բոց արձակող նույն ավերված «Մարութա բանձրը Աստվարածինն» է:

Լեռան գլոխ կանաչ-կարմիր բոց կիւնի, կիշնի.
Դավիթ գնաց, էլավ լեռան գըլոխ.
Էլավ գնաց էդ կրակի մոտ,
Նայեց... կրակ չի գերեղման ի,
Ասաց. «Էս իմ խոր գերեղմանն ի»:

Հովանը հաստատում է՝

— Դավիթ, էն քու խոր գերեղմանն ի
Սասնա Մհեր որ կըսին՝ էն ի:

«Ա. Ծ.», Ա. 735

Մի այլ վարիանտում Հովանը վկայում է՝

— Է՛՞հ, խրոխպեր կուրբան ը քի, կասը՝
Էսա Մարութա Պանցր Աստվարածին ի.

«Ա. Ծ.», Ա. 623

Մհերը նույնացել է իր «Աստվարածնի» հետ: Մահից հետո ինքն է դարձել «Մարութա բանձր Աստվարածին», այդ պատճառով նրա վերաշինումը դիտվում է որպես համազգային գործ. վերաշինել այն, նշանակում է վառել «Սասնա ճրադր», նշանակում է ունենալ վտանգի պահին օգնող մի հզոր ուժ ևս:

Ով ուր աստված կսիրա, թող գա.
Սասնա ճրագ վառվիր ա.
Մարութա բանցրիկ Աստվարածին տը շինինք:
«Ա. Ծ.», Ա. 1000

Եվ իրոք, ժողովրդի ներկայացուցիչները վտանգի պահին Դավիթին հիշեցնում են նրա գոյությունը, որը Դավիթի կանչով օդնության է հասնում մոտա-

¹ Լաֆարը — „Религия и капитал“, էջ 8—9:

² Նույն տեղում, էջ 87:

վորապես այնպես, ինչպես նախնիների հոգիները հույներին՝ Մարտիռնյան ու Սալամինյան ճակատամարտում և Կիրիլ Աստվածը հոռմեացիներին՝ Հանիբալի դեմ մղված կովում։ Հույներին և հոռմեացիներին օգնող նախնիների հոգիները կամ աստվածները ըստ էության նույն ժողովուրդների ուժն է՝ այլ կերպարանք ստացած, ճիշտ այնպես, ինչպես Դավթին օգնող «Մարութաբանձր Աստվարածինն» էլ միֆական, հեթանոսական գունավորում ստացած Մհերների՝ հայ ժողովրդի ուժն է։ Այսպիսով «Մարութաբանձր Աստվարածինը» սիմվոլացնում է ոչ թե քրիստոնեական եկեղեցու կամ «աստծու ուժը», այլ ժողովրդի ուժը։ «Մարութաբանձր Աստվարածինը» իր հետնորդներին՝ Դավթին օգնող աստվածացած նախնիի, ուրեմն և ժողովրդի ուժի սիմվոլն է։

Վերը բերված օրինակում, ինչպես և վեպի վարիանտներում ավելիված «Մարութաբանձր» ներկայացվում է «Մարմար» քարից կամ «Մարութիկի» հիմքից բխող բոց— կրակի պատկերով։

Մնաց: Կես քիշերվան ի.

Իրիշկեց, սարի մեշի մեջ մե կրակ ըմ կը վառվեր։

Էլավ կնաց դրբա էն կրակին։

Կնաց էնտեղ, տեսավ,

Որ վանք Մարութայ ի.

Մարմար քար պացվիր ի,

Լուս կամար վերեն կանգնիր ի,

Վանքի խիմ պացվիր ի։

«Ա. Ծ.», Ա. 262

Կամ

Դավիթ աշքեր կրանա,

Կը տիսնա՝ մեկ բոց կը լնը։

Կը լնի, կայնի, կը հա,

Բոցին թամաշա կանի,

Կհա մոտ, ձեռ կտա բոցին,— շիրիցի ձեռ.

Խող կը թալի,— շընցնի։

Նոր ուր խելքին մեջ կը մտածի.

«Նա Մարութիկ Բանձր Աստվարածին կը սին, նայ ի»։

«Ա. Ծ.», Ա. 665

Այսպիսով «Մարութաբանձր Աստվարածինը» սիմվոլացնում է նաև կրակի ուժը և այդ շափով առնչվում նույն երեսությը սիմվոլացնող «Խաչ պատրազնի» կամ «Խաչ պատերազմի» հետ։

Իր նախնական բովանդակությամբ քրիստոնեության հետ ոչ մի կապ չունի նաև «Խաչ պատրազինը», չնայած որոշ պատումներում այն ներկայացվում է մեծ մասամբ որպես քրիստոնեության խորհրդանշան։ «Բոլոր վկայությունները պարզորոշ ապացուցում են, որ խաչը քրիստոնեական ծագում չունի, ինչպես ճգնում էին Հավաստել քրիստոնեական եկեղեցու վարդապետները։ Խաչը քրիստոնեական կրոնի մեջ երեացել է 4-րդ դարում, թերևս 5-րդ

դարի սկզբներում, այն էլ փոխանցվելով միթրայական կրոնից, ուր խաչն ուներ սրբազն, խորհրդավոր նշանակություն։ Խաչի գործունեությունը զանազան հին ժողովուրդների հեթանոսական կրոններում, հավատալիքներում ու պաշտամունքներում, միստիկական վարդապետություններում բացատրվում էր նրանով, որ այդ հավատալիքների և ուսմունքների կենտրոնում խաչի մեջ տեսնում էին բնության ստեղծագործող էռության նշանակությունը, հարության ու նոր կյանքի նշանակը, որ արտահայտություն էր արեի, ջերմության, ուրեմն և նրա նյութեղեն երևութի՝ կրակի, որ գոյանում էր երկու խաչաձևած փայտե ձողիկներն իրար քսելուց։¹

Վեպում գործածվող «Խաչ պատրագինը» սիմվոլացնում է Հենց այդ «Երկու խաչաձևած փայտե ձողիկներն իրար քսելուց» առաջացած կրակը և դրա հեթանոսական, միֆական հասկացողությունը։ Վերջինս «Խաչ պատրագին» կրակ լինելու վաստի հետ պահել է մի քանի ուրիշ գծեր ևս, որոնք հետագայում կանոնի բնույթ են սուսացել և այդպիս էլ մնացել վեպում։ Դավիթը, օրինակ, նրան պետք է օգնության կանչի աղաչանքով, պետք է նրանով երդվի և ճշտությամբ կատարի իր խոստումը, հակառակ դեպքում նա ոչ թե կօգնի հերոսին, այլ կմեռցնի։ Այդպիսի մի քանի կանոնների խախտման հետեւանքով Դավիթի ապրած ծանր վիճակի նկարագրությունից իմանում ենք, որ «Խաչ պատրագինը», իրոք, կրակի սիմվոլ է։

Են որ Տավիթ հերդվցիր էր, էն վախտ ընցավ.

Որ ընցավ, էն Խաչ Պատրագին անու քիվ վարից.

Տավրի քիվ ելավ բրին.

Հեքիմ, դեղ պիրին, չկը բցան ժրացըցին,

Բրին կը շատանար, քանի երթեր:

Անու թիվ, անու բրին կը վառվեր:

«Մ. Ծ.», Ա 647

Կամ

Էտ խաչ, որ հորտում արե, ինոր կը վառի,

Էլ չկենա Սուլթանի խետ կոփիվ անի։

«Մ. Ծ.», Ա 868

«Խաչ պատրագինը» իր կրակային էռությամբ հանդես է գալիս նաև որպես Դավիթին օգնող այնպիսի ուժ, ինչպիս «Մարութա բանձր Աստվարածինը»։ Դավիթը իր թեկին ունենալով այն, տիրապետում է բնության ամենազոր ուժերից մեկին՝ կրակին և նրա օգնությամբ անպարտ դուրս գալիս պատերազմի բոլոր դժվարություններից։

Դավիթի մասին.

Կոփիվ արավ երկու իրիք օր,

Խաչ Պատրածին մուղցավ,

Արուն էլավ, իտու ձիու փուր հինը,

¹ Խ. Առմ կելյան—«Հին Հայաստանի կուլտուրան», հատ., 2-րդ, Արմֆան, Երևան, 1941, էջ 93։

Արուն պաղամ, ալ ձին շըր կանա
Զարուն ճղեր, մանչ արնին քելեր:
Դավիթ խաչ պատրածին մուռցեր էր.
Դավիթ նեղ ընկեր էր:

«Ա. Ծ.», Ա. 593

Դավիթին այս «նեղ տեղից», ինչպես և 40 գաղ խորություն ունեցող հորից,
որ խաբեռությամբ զցել էր Մարտ Մելիքը, փրկում են «Խաչ պատրազինն» ու
«Մարութիկը»:

Հովանը կանչում է հորն ընկած Դավիթին.

Դավիթ, հուստն իս,
Հիշու Մարութա Բանձր Աստվարածին
Խաչ պատրազին, ինչ վար քո աջ թեին:

«Ա. Ծ.», Ա. 28

Դավիթը հիշում է դրանք՝

Յա՛, Մարութա Բանձր Աստվարածին,
Խաչ Պատրազին ինչ վար իմ աջ թեին,
Խնդիրք ձեզնե յիմ էրի, տուք ձի հասնեք:

«Ա. Ծ.», Ա. 29

Ասաց, դիր ըմ զինք թափ ետուր,
Ասծով զինջլի կտորքեր երկնուց էկան տակ,
Դավիթ էլավ թուավ խորու բերան:

«Ա. Ծ.», Ա. 29

Իր բովանդակությամբ «Մարութա բանձր Աստվարածնի» և «Խաչ պատրազնի» հետ սերտորեն առնչվում է նաև Դավիթի ուժի անրաժանելի մասը կազմող «Թուր Կայծակին»: Թրի «կայծակի» կամ «կեծակի» էպիտետները վկայում են, որ այն նույնպես կրակի ծագում ունի: Այս համոզիչ է դարձնում մեապում եղած մի կարեւոր փաստ: Նախրորդ Դավիթը զայրույթի պահին վերցնում է մի քար և խփում անհանգիստ ու «շար» կովերից մեկին: Քարը այնպիսի ուժով է նետվում, որ կովի մյուս կողից դուրս է դալիս: Այս տեսնում է Քեռի Թորոսը: Որպես փորձված մարդ, անմիջապես հասկանում է այդ հաղվագյուտ քարի զորությունը, վերցնում է և գրպանը դնում: Դավիթի այն հարցին, թե ինչու գրպանը դրեց, Քեռի Թորոսը պատասխանում է՝

— Լառ Դավիթ, էդի կեծկի քար ա,
Ինչ թրի բերան, որ զըրբիս էդ քարով.
Թալիս ապառաժ քարեր, կը կըդրա:

«Ա. Ծ.», Բ. 278

Երկնային կամ երկրային ծովից լինի ձեռք բերված, թե երկնային քարի շփումից ստացած լինի փր կայծակնային զորությունը՝ մինույն է, կարեւոր

այնէ, որ սերնդից սերունդ անցնող այդ թուրը իր մեջ խտացնում է կրակն ու կայծակը: Թուրը իր դերով սիմվոլացնում է բնության այդ երկույթները: Եվ իրոք, այն ոչ միայն «ապառաժ քարեր կը կըդրա», այլև կտրում է երկինք հասնող պողպատե սյունը և իր արձակած բոց-կրակով մոխրացնում թշնամիներին:

Էստ թուր համնելու պես՝ պըծառ իմ կրակ կիշնը.

«Ա. Ծ.», Ա. 517

Կամ

Որ ըզթուր համնից, կրակնիր քափավ,
Ճաղչը քար, պաղվըտե սալ, գոմշու կաշիք,
Ախը, զՄելիք կտրավ, տապկից երկու կես:

«Ա. Ծ.», Ա. 639

և արակ

Քեշին խանին դուռ,
Կը խանին տիսնան՝ մեկ կտուր ի մնացիր ի.
Էն կտուրն էլ, ինչպես վառվուի ի.
Ինչպես կրակի մեջ վետ դնիս,
Վառվը, սիվանա, սկոն սիվացիր ի:

«Ա. Ծ.», Ա. 437

Մի այլ պատումում՝ վիպասանը «Թուր կայծակի» հզորությունն ու կայծակնային էռթյունը բացահայտում է հետեւյալ ոգեշունչ նկարագրությամբ:

Չեռ ետու քեշից զթուր Կեծակին,
Հուշիկ ինչ իտի վար ձիու քամկին,
Կտրից զքառսուն գոմշու կաշին,
Կրտրից զձիու մեշը,
Առից զՄսրամելիքի գլխու կարտին,
Գետըն կտրից, — կեծակ էր, արա բո՞ւր
Գետըն կտրից, կինաց, առից Սիվ զուր:

«Ա. Ծ.», Ա. 203

Եվ վերջապես Դավթին ուժ են տալիս նաև Հայրենի «Զորընդեղ» ջրերը: Կաթնաղբյուրի ջուրը խմելով, նա տառացիորեն մի քանի ժամում դառնում է շտեսնված հզորությամբ օժտված մի իսկական վիպական հերոս:

Դավիթ լե վեր էկավ,
Էն կաթնաղբը ճուր.
Էնտեղ ճուր խմավ, խաց կերավ.
Մեկ սհաթ քնավ, էլավ, տեսավ, —
Ընկավ վար էն կաթնաղբը ին, քնավ:
Տեսավ՝ էնպեսն ի լցվի,
Էնպեսն ի խաստացի,
Էնպեսն ի զորություն, ոժ առի
Որ շափալամիշ ի էղի:

«Ա. Ծ.», Ա. 22

Կաթնաղրյուրի և Սասնա բերդի հիմքից բխող ջրերը ուժի սիմվոլներ են: Դրանք միաժամանակ ապաքինում են կովում Դավթի ստացած վերքերը և այդ շափով պահպանում նրա մեջ մարմնավորված ժողովրդի և բնության հղորությունը:

Կարմնջի տակ գոլ կը եր.— Էնտեղ կը լողկըներ,
Յարեք կը սաղներ, կդառնար կոիվ էլ ըմ:
«Ա. Ծ.», Ա. 375

Այսպիսով, նախնիների, կրակի ու կայծակի և առհասարակ բնության ուժը սիմվոլացնող Հայրենի «Զորընդեղ» ջրերը, «Մարութա բանձր Աստվարածինը», «Խաչ պատրագինն» ու «Թուր Կեծակին» կազմում են Դավթի ուժի անքակտելի մասը: Վերը բերված օրինակները և բազմաթիվ այլ օրինակներ ցույց են տալիս, որ բոլոր այն դեպքերում, երբ Դավթը մտուանում է նրանց և շի տալիս տրադիցիայով սրբագործված պատշաճ հարգանք, որ անտարակույս, վիալական գիծ է, ընկնում է ծանր դրության մեջ, դառնում է անզոր և շատ սովորական մի մարդ: Բայց ինչպես Դավթին անզոր է առանց այդ ուժերի, այնպես էլ մեռած ու անզոր են այդ ուժերը առանց Դավթի: Այսպիսով, այդ ուժերը մեկը մյուսից անկախ ոշնչություն են. նրանք հայ ժողովրդի միջական մտածողության համաձայն մարմնավորվելով Դավթի մեջ, պայմանավորում և լրացնում են իրար: Այժմ, քանի որ Դավթը որպես ժողովրդի ուժի մարմնացում, «Մարութա բանձր Աստվարածնի», «Խաչ պատրագնի», «Թուր Կեծակի» և Հայրենի «Զորընդեղ» ջրերի ու կաթնաղրյուրների միջոցով իր մեջ խոտանում է նաև կրակի, կայծակի և բնության հղորությունն առհասարակ, ապակարող ենք ասել, որ նա ժողովրդի և բնության ուժերի խոտացումն է:

Իսկ ո՞ւմ դեմ է ուղղված և ո՞ւ շահերին է ծառայում, այդ ուժը՝ Դավթիթը:

Բ) Դավթի հերոսական կյանքի պատմությունը ցույց է տալիս, որ նա որպես կերպար ձևավորվում է «Սասնա բերդի» (=Հայոց տան) պահպանման և ժողովրդի ինքնության համար մղած տեսական ու անհավասար կոիվներում: Տակավին երեխա Դավթի մեջ ժողովուրդը մարմնավորում է թշնամու հանդեպ անհաշտ լինելու ոգին, որը վեպում ծավալվող հետագա բարդացող դեպքերի ընթացքով ստանում է հերոսական քնավորություն: Մորում նա հրաժարվում է օրոնել թշնամու և խորթ մոր ստինքը¹ և սնվում է Հայրենի սիմվուիլ մեղր ու կարագով:² Զախողելով Մորա Մելիքի ուղամական վարժությունները, թշնամական դիրք է բռնում ապագա բռնակալի նկատմամբ: Այդ թշնամանքը դրակորակում է այնպիսի բացահայտությամբ և հասնում այն աստիճանի, որ Մորա Մելիքն զգալով, որ՝

Վերջին տիր էստ տելնի, խետ ձի կոիվ անի,
«Ա. Ծ.», Ա. 10

¹ «Սասնա Ծոեր», Ա. հատոր, Պետհրատ, Երևան, 1936, էջ 760:

² Նույն տեղում:

մորն ստիպում է՝ Դավթին հետ ուղարկել Սասուն, գաղտնի պատվիրելով իր «ֆերզներին» ճանապարհին սպանել նրան:¹ Վարիանտներից մեկում մանուկ, Դավիթը հրաժարվում է անցնել Սասուն ժողովրդին ստրկացրած Մսրա Մելիքի սրի տակով: Զենով Հովանի, Քեռի Թորոսի և Հատկապես պառավ կնոջ խրատներով ու խորհուրդներով, իրադրությունն արդեն ամբողջապես ըմբռուած երիտասարդ Դավիթը, իր սիմվոլիկ «Թուր Կեծակով», «Մարութա բանձր Աստվարածնով» և «Խաչ պատարազն»-ով ի սարսափ Մսրա մելիքների՝ հանդես է գալիս որպես հայրենիքը ավերումից փրկող ոեալ ուժ: Դառն է եղել Հայ ժողովրդի պատմական ճակատագիրը: Անրնդհատ ոտնահարվել է նրա ազատությունը, ավերվել նրա քաղաքներն ու շենքերը: Վեպում եղած մի շարք պատկերներ դրսեորում են անընդհատ կրկնվող այդ փաստերը:

Կողբաղին էսաց.— Զենով Հովան,
Կըտաս² տուր օխոտը տարվան խարջ.
Թե չես իտար, կերթամ, Մսրամելրին կասեմ,
Կը կա, Սասմա ժաղաք ավրի, տանի,
Մսրա ժաղիք ժամակ նոր ժաղաք ըմ շինի:

«Ա. Ծ.», Ա. 16

Կամ»

Մսրա Մելիք թուղթ կիրից, ճամրիսից էսաց,
Տաս որ լըմցավ, իմ վրդդեն թըմըմավ.
Կը կամ, կը զարկիմ ժու ժաղաք կավրիմ,
Զժար ու խող կառնիմ, կը տանիմ:

«Ա. Ծ.», Ա. 197

Նույն սպառնացող ոճով և նույնիսկ ավելի խիստ, գրում են մյուս բըռնակալները: Բարը ֆրենկը գրում է՝

Կը դաս, էրի մի կոիվ.
Վուր շրս իգա, ասկար կը քեշիմ քու վերա,
Քո երկիր ժարքանդ կենիմ,
Ինչ կա-չկա, թալնիմ, լոպկիմ, քիրիմ:

«Ա. Ծ.», Ա. 461

Դավիթը չի ենթարկվել նման սպառնալիքների: Նա միշտ բաց ճակատով և հերոսարար կանգնել է իր թշնամիների դեմ, օրհասական և վճռական բոլոր կոիվներում հաղթել նրանց և դրանով իսկ անխախտ պահել Սասուն Բերդը՝ հայոց տունը: Նրան շարունակ զայրույթ է պատճառել անարդարությունը, ուրիշի երկրին տիրելու ավագակային ձգտումները: Նրա ազատասիրական ոգին օժտել է նրան ըմբռութ և հերոսական բնավորությամբ, որն անշուշտ, իր առագայի նկատմամբ լավատես, ըմբռութ և հերոսական ժողովրդի էության

¹ «Սասմա Մոհեր», Ա. հատոր, Պետհրատ, Երևան, էջ 10:

² «Սասմա Մոհեր», Բ. հատ, էջ 64:

բնորոշ գծերն են: Այդ է պատճառը, որ նա շտեսնված զայրութով է նայում Կողբադինի կողմից «Սասմա տան» ուկին շափելու տեսարանին:

Որ Դավիթ տեսավ
Բարկութենե արուն լցվավ աշքեր...

«Ա. Ծ.», Ա. 15

և ապա՝

Զշափ էզար Կողբադնի ճակատ, գլոխ կոտրավ,
Կողբադնի պոկտեր կտրեց:
Ատամներ լե քաշեց, բվոնեց ճակատ, տսաց.
— Գնա ջուհապ տուր քո Մորա Մելքին
Ինչ կանի, թրի անի:

«Ա. Ծ.», Ա. 16

Դավիթը նույնպիսի վճռականությամբ վոնդում, սպանում է նաև «Սասմա» քաղաքն «ավիրել, ինչ կա-շկա թալնել, լոպկել» ցանկացող մյուս բռնակալներին:

«Սասմա տում»-ը թշնամիների «ավերումից» վրկելու հետ միասին, նա միաժամանակ փրկում և պաշտպանում է այդ տունը կանգուն պահող ժողովրդին՝ «իսեղճ մարդեր»-ին: Վերջիններս Մորա-Մելքին սպանության լուրը լսելով շտեսնված ցնծություն են ապրում: Զեն սպասում Դավիթի վերադարձին. Զենով Հովանի պլիսավորությամբ «էն գեղական» մարդ, կնիկ, խալվոր, պառավ, ճիժ-բիժ գնում են դիմավորելու նրան: Հեամից նկատելով մեծ քաղմության մոտենալը նա պատրաստվում է կովի, բայց հորեղբոր ներկայությունը կանխում է կոտորածը: Դավիթի այն հարցին, թե ինչն է «իր վրա» դալու պատճառը, Հովանը բացատրում է՝

— Դավիթ, մինք իկիր ինք, քու վերա կը խնդանանք,
Վուր մինք փառք կըտանք Աստըծուն՝ սոլամաթ էկար:
Դավիթ կըսի — էդա կնկտեր հընչի՝ էկած ի:
— Դավիթ, կըսի, ինչ դու գնացիր,
Չոր մկա էդա շիվարքիր կը լըն, Աստված կը կանչին,
Կը վախեննեն՝ Մորա Մելքիք քի սպանի.

Տաճկընիր գեն, քաղաքը մարդիր՝
Հրմեն սպանեն, կնկտիր տանեն,
Վուր քու գալ լսան, հրմեն խնդացան, ուրախացան.
Ջուշ, պստիկ քու հապով էկան:

«Ա. Ծ.», Ա. 438

Խորապես զգալով իր կատարած գործի մեծությունը, Դավիթը դիմելով ժողովրդին, ասում է՝

— ԴԵ դառցեք, գնացեք, ըձը դուղա էրեք.
Մելքք սպանիր իմ, դե՛ դառցե՛ք, դե՛ դառցե՛ք:
Էդա խեղճ մարդիր էկան,
Արխային տնիր նստան.
Էլ սկի շըն վախենա:

«Ա. Ծ.», Ա. 439

Նշանակալից է այն հանգամանքը, որ Դավիթը իր թշնամի բռնակալներին սպանելով ազատություն և խաղաղություն է բերում ոչ միայն հայ, այլև ուրիշ ժողովուրդների։ Մսրա Մելիքին սպանելուց հետո, օրինակ, նա ոչ թե ստրկացնում է Մսրա ժողովրդին, այլ հրամայում է հետ դնալ և «ուահաթ» նստել իրենց տներում։

Տավիթ հրամայեց Մըսրա դորքերուն,
— Ուր դեխեն էկել էք, կնացեք ձեր դեխեր,
էլեք, կնացեք, ձեր տներ, որհաթ նստեք։

«Ա. Ծ.», Ա. 1123

Նույն կերպ է վարվում նաև Բաբը ֆրենկին ու նրա «Ճոշ մարդիր» սպանելուց հետո։ Ոչնչացնելով բռնակալներին, իշխանությունը տալիս է ժողովրդին՝ «Պստիկներին» և պատվիրում խաղաղ ապրել, իսկ «նեղն» ընկնելիս, «թուղթ» գրել իրեն։

Կերթա Բաբը ֆրենկի քաղաք,
• • • • • • • • •
Թագավոր՝ կը բռնի, կը զարկի, կը սպանի։
• • • • • • • •
Զաթի ճուշ մարդիր կսպանի
Պստիկներ տեղ կըդնի, կըսի։
— Քաիի դու ժիր եք, կոփվ միք էրթա։
• • • • • • • •
Էնտե կը թամբխի. — Վուր դու նեղ կընգնեք,
Բձը թուղթ գրեք, ճամբխեք, իս կը գամ։

«Ա. Ծ.», Ա. 465

Դավիթը կոփվ չի սիրում, դեմ է արյունահեղության, սակայն, երբ ամբարտավան թշնամին գոռոզանալով իր ուժով՝ ցանկանում է տիրել նրա երկիրն ու ստրկացնել ժողովրդին, նա անվարան դուրս է դալիս նրա դեմ և այնուհետև ոչ մի աղաշանք չի կասեցնում նրա «Թուր Կեծակի» ոչնչացնող հարգածը։ Կովի և խաղաղության մասին հայ ժողովրդի հայացքն է շարադրված նաև Խանդութի պատասխան նամակում։ Խանդութը Բաբը ֆրենկին գրում է՝

Մինք քի զարար մը շընք տվի.
Մինք քի շընք ճանշնա.
Մինք քի ի՞նչ ինք էրի,
Վուր կը գաս մի վերա կոփվ։
Մինք քու անուն շընք լսի,
Քու դավին մի խիտ ի՞նչ ի.
Մինք քի ի՞նչ ինք էրի,
Վուր կը գաս մի վիրա կոփվ։
Վուր կը գաս մնակ մի գա,
Չըս կերի Դավիթը վրա.
Հուրիշ թագավոր էլ խիտ քի քի մի վրա.
Թը էն էլ գա, հոգնի քի։

«Ա. Ծ.», Ա. 462

Բերած օրինակները բավական են համոզվելու, որ Դավիթը մանկությունից մինչև իր կյանքի վերջը կորիվ է մղում հայ ժողովրդի (և ոչ միայն հայ ժողովրդի) ինքնության և նրա հայրենիքի անձեռնմխելիության համար։ Վերոհիշյալ բոլոր վճռական գործողությունները ի վերջո բովանդակավորում են նրա կերպարը, թանձրացնում և բյուրեղացնում որպես այդպիսին։ Ահա թե ինչու ասում ենք, որ Դավիթը մեծագույն դժվարությամբ կառուցված Սասնա բերդի (=Հայոց տան) պաշտպանության և հայ ժողովրդի ազատասիրական դարավոր ձգտումների մարմնացումն է։

3. Վեպի հաջորդ կերպարը Փոքր Մհերն է։ Վերջինս արտացոլում է՝ ա) կրակը, արևը և բ) շար աշխարհի դեմ կովող ժողովրդի, շար աշխարհի կործանման, նորի կերտման և ժողովրդի անմահության գաղափարները։

Ա.) Փ. Մհերը «խրեղեն» (Հրեղեն) Սանասարի և Բաղդասարի վերջին շառավիղն է։ Սրանից հետեւում է, որ ինչպես մյուսները, այնպես էլ Փոքր Մհերը նույնպես «խրեղեն» է։ Բայց այս շատ ընդհանուր փաստարկ է Մհերին ճրագը, կրակը արտացոլող կերպար համարելու համար։ Բարեբախտաբար վիպում կան մի քանի բնորոշ տվյալներ, որոնք կոնկրետացնում են այդ ընդհանուր փաստը։

Մհերն ամուսնանում է Գոհար Խաթունի հետ։ Այս ակտը զայրացնում է Գոհարին ուժով տիրել ցանկացող թագավորին։ Վերջինս մեծ զորքով արշավում է Գոհարի երկրի վրա, Մհերից իր վրեժը լուծելու համար։ Մհերը կոտորում է զորքը և հակառակ թագավորի սպասելիքներին պարտության նշաններ շի ցուց տալիս։ Որոշում են Սասունից Մհերի «գեմ կանգնող=փահելվան» կանչել։ Գնում են Զենով Հովանի մոտ։ Նա ուղարկում է պարոն Աստղիկին, տալով թևավոր ձի և «Թուր Կայծակին»։ Մհերի և պարոն Աստղիկի կոիվը նկարագրված է հետևյալ կերպ։

Պարոն Աստղիկ ձին թևավոր խեծավ, իրի Մհերի կոիվ։
Վար Մհերկե գլխուն ինի կերթա, կուգա։

Թուր կշարժի վար մատալին,

Բուռ-բուռ կրակ կը լցվի վար մատալին,

Մատալից շուռ կառնի գետին, կերթա հանգույք։

«Ա. Ծ.», Ա. 112

Դավիթն օգնող սիմվոլիկ ուժերի մասին խոսելիս տեսանք, որ «Թուր Կայծակին» իր մեջ խտացնում է կրակը, կայծակը և այդ շափով էլ սիմվոլացնում այն։ Մենք իմացանք նաև, որ «Թուր-Կայծակի» հարգածը և նրանից թափով կրակը ոչ միայն «ժայռեր կկրդրա», ինչպես վկայում է Քեռի թորոսը, այլև մոխրացնում է Սասնա երկրի թշնամիներ՝ Մորա Մելիքին և մյուսներին։ Նման հատկություն ունեցող թուր կայծակին շնայած «բուռ-բուռ կրակ» է թափում Մհերի գլխին, բայց և այնպես նրան սպանել, մոխրացնել շի կարողանում։ Անշուշտ, ոչ այն պատճառով, որ Մհերը Սասնա երկրի թշնամին չէ, այլ միայն այն պատճառով, որ նա նույնպես «խրեղեն» է։ Ահա թե ինչու նրա գլխին թափով «բուռ-բուռ կրակը մատալից շուռ կառնի գետին, կերթա անդումնեք»։

Մհերին կրակը արտացոլող կերպար համարելու հաջորդ փաստը՝ նրա և Աստղու Ցոլածնի ուշագրավ միջադեպն է։

Գոհարի հետ Սասուն վերադառնալուց հետո, մի քանի այլ պատումներում, Մհերին կովի է հրավիրում Աստղու Յոլածինը: Նա հրաժարվում է կովի: Զնայած դրան՝ Աստղու Յոլածինը «քարե» կարկուտի պես «վերևեն» (երկնքից— Գ. Գ.) անետ ու անեղով» հարվածում է Մհերին: Գոհարը տեսնելով այդ, խնդրում է Աստղու Յոլածինին խնայել Մհերին: Գոհարը զայրացնում է Մհերին: Նա անմիջապես լարում է «նետ անեղը» և սպանում իր աստծուն:

Ըսեց.— Զա՞նըմ, ես կըսիմ՝

Դեմի իմ Ասծուն իմ դըրք շըթալիմ,
Թե չէ՝ Աստղու Յոլածնի սպաննել շաթինա աւ
Զնեղ ու անեղ դեղեց Մհեր,
Զարգեց, զ Աստղու Յոլածնին քերեց ցած:

(Ա. Ծ., Բ. 347)

Աստղու Յոլածինը անձնավորված արևն է, նա իր մեջ մարմնավորում է կրակը, նա կայծածին է կամ ցոլածին, այդ է ապացուցում նրա անունը: Սա Մհերին հարվածելու համար պարոն Աստղիկի նման կայծակե թուր շունի իր ձեռքում, որովհետև ինքը հենց կայծակ է, ցոլածին, և ոչ էլ թևավոր ձի՝ վեր բարձրանալու, որովհետև դտնվում է վերևում՝ երկնքում, այլապես վիպասանը չէր ասի, թե՝ «զարգեց զԱստղու Յոլածնին քերեց ցած»: Այժմ, քանի որ երկնքում դտնվող Աստղու Յոլածինը մարմնավորելով իր մեջ կրակը, ցոլածին արևը Մհերի համար հանդես է դալիս որպես աստված, ապա պետք է ենթադրել, որ Մհերը նույնպես կրակային էություն է, կրակի և արևի մարմնացում, այլապես նրան իր աստվածը չէր համարի և չէր տարակուսի նրան սպանել: Սակայն կարող են ասել, թե մարդը իր աստծուն գերբնական հատկություններ վերադրելով հանդերձ, պատկերել է առավելապես իր կերպարնքով՝ «Հին ժամանակվա բոլոր աստվածները մարդակերպ էին»¹ եվ հետեւապես Աստղու Յոլածնին նույն կերպ կարող էր պաշտել նաև մի Քեռի թորոս, վեպի մի այլ հերոս, կամ մի սովորական սասունցի, մանավանդ որ, ըստ Գոլկլորի տվյալների, կրակի պաշտամունքի կառակցությամբ պաշտվել է և արևը: Ռւբեմն, սխալ չի՝ լինի արդյոք, Աստղու Յոլածնին Մհերի աստված համարելու փաստը դիտել որպես նրա կրակային էության հիմք: Նման դատողությունը ճիշտ կլիներ, եթե Մհերի կրակի մարմնավորում լինելու հանդամանքը հիմնավորվեր միայն նրա «զեմի իմ աստծուն իմ դըրք շթալիմ» արտահայտությամբ, առանց նախորդ փաստերը նկատի ունենալու: Մինչդեռ հայտնի է նրա պապերի հրեղենությունը, որոնց «խրեղեն» հետնորդն է ինքը և պարոն Աստղիկի հետ ունեցած կովի ժամանակ նրա վրա օբուռ-բուռ կրակ թափող թուր կայծակի անզորությունը: Այս փաստերի առկայության ու կապակցության մեջ է, որ իմաստավորվում է աստվածամարտ Մհերի և Աստղու Յոլածնի միջապեսը և դրա միջոցով էլ նրա՝ կրակի, արևի մարմնացում լինելու հանդամանքը:

Այդ երեւյթների շղթայի մեջ Մհերի հիշալ էով յունական հաստատում է մի

ուշագրավ դեպք ևս: Վեպի մի քանի պատումներից իմանում ենք, որ քար-
այրում փակված Մհերի գլխավերեւում վառվում է մի անշեղ ճրագ, որից
կրակ է վերցնում ժողովուրդը, երբ հանգչում է իրենց տան ճրագը:

Էն հիրիկվան մեկ մարդ ուր աղջկան կասը.

— Իլի՛ կինա ժամ, մոմ կպը, ոխնուկ կրակ ա՛ռ, բի՛:

Ախշիկ կըլնը տուս, կերիշկը, կը տեսնա՝

էդա քուրեն ճրագի բուխ կըլնը.

Էդ ախշիկ էլավ կինաց էն ումուտով, թի ժամն ի:

Մտավ էնդեղ, ճրագ կպուց:

«Ա. Ե.», Ա. 244

Ոչ մի հիմք չկա, քարայրում, Մհերի գլխավերեւ վառվող ճրագը պա-
տահական համարելու: Ընդհակառակը՝ մեր առաջադրած հարցի տեսակետից
ճրագի գոյության փաստը միանգամայն օրինաշափ երևույթ է: Ճրագը՝ այդ
կրակն է: Ճրագը և Մհերը միանույն տարերքի (կրակի) տարբեր արտահայ-
տություններն են. տվյալ դեպքում առաջինի առկայությամբ ու միջոցով բա-
ցահայտվում է երկրորդի (Մհերի) էությունը: Այս է պատճառը, որ նրանք
գտնվում են իրար մոտ և պատկերված են միասին: Իսկ եթե նկատի ունե-
նանք նաև, որ Մհերին դեպի քարայր առաջնորդող հրարեր ագուավը «արևի
սուրբանդակն է» և նույնիսկ «Մհերի դուռը, որի հետև փակված է դյուցազ-
նը, սիմվոլիկ կերպով նայում է արևին»,¹ ապա միանգամայն պարզ կլինի,
որ «Այրի մեջ Մհերի գլխավերեւ օր ու գիշեր վառվող ճրագը խորհրդանշանն
է արևգակնային Մհերի»,² որ նա կրակի, արեգակի մարմնացումն է, հետեւ-
ալես և նրանց գեղարվեստական ընդհանրացումը:

Բ) Իր այս դիցաբանական էությամբ հանդերձ, Մհերը միանգամայն
ուեալ կերպար է, որի հետ ժողովուրդը կապել է լավագույն ապագայի նկատ-
մամբ ունեցած իր սպասելիքները:

Վեպի մյուս գլխավոր հերոսների համեմատությամբ Մհերը նոր աստի-
ճան է իր գործելակերպի ըմբոստ բնույթով և վիպական լեզվով արտահայտ-
ված սոցիալական այն նոր պահանջներով, որպիսիք չենք տեսնում նրա նա-
խորդների մոտ: Ինչքան էլ ուժեղ լիներ վիպական տրադիցիան, վեպի ճյու-
ղերը և կամ նրանցում ծավալվող էպիզոդները նույնությամբ փոխանցելու
իմաստով, վեպը չեր կարող իր վրա շկրել այն ժամանակի կնիքը, որի մեջ
իր շարքաշ կյանքով, բայց և ներկայի նկատմամբ ցասումով լցված ապրում
էր վիպասանը: Բնական է, որ նա, ինչպես վեպի մանրամասների, այնպես էլ
գլխավոր հերոսների մեջ պետք է դներ և դրել է ժամանակի և ժողովուրդի
կենսական շահերի արդյունք հանդիսացող նոր գաղափարներ: Այս իմաստով
վեպում, շնայած դեպքերն ու ժամանակը ունեն առավելապես անախրոնիկ
բնույթ, շնայած առասպելականն ու իրականը, պատմականն ու կեղծ պատ-
մականը ձուլված են, այնուամենայնիվ, թե՛ ճյուղերը և թե՛ գործող գլխա-
վոր հերոսները հիմնականում տարբերվում են իրարից: Եվ իրոք, մինչդեռ

¹ Ագ. Իսահակյան—«Փորձ մեր էպոսի դիցաբանության մասին», տես «Խորհրդա-
յին գրականություն», 1939 թ., № 8—9, էջ 36:

² Նույն տեղում:

վեպի առաջին ճյուղը արտացոլում է Սասնա տան (=Հայ ժողովրդի տան) հիմնադրման առասպելական, վիպական պատմությունը, և առավելապես բնության շար ուժերի դեմ երկու եղբայրների մղած հերոսական կովի պատկերները, երկրորդ ճյուղը՝ արդեն ճանաչված հզոր Սասունը, արտաքին թշնամիներին սարսափեցնող իր առյուծ կամ առյուծածել Մհերով։ Ի տարբերություն նախորդներից, երրորդ ճյուղը զերծ է քնության շար ուժերի՝ վիշտապների ու գաղանների դեմ մղվող կովի փաստերից։ Այս ճյուղն ընդգրկում է համեմատաբար ավելի ոեալ հարաբերություններ։ Այստեղ, ինչպես և նախորդ ճյուղերում ակնառու է սոցիալական բողոքը, սակայն կենտրոնական հարցը հայ ժողովրդի արտաքին թշնամիների դեմ մղված կոհին է, նրա աղքային անկախության պահպանումը, որն անձնուրաց և հրաշալի կերպով իրագործում է Դավիթը։ Չորրորդ ճյուղում հիմնովին փոխվում են իրադրությունները։ Այստեղ սասունցիները որոշակի կերպով բաժանվում են և հակադրվում իրար ուամիկն ու իշխանը։ Այս ճյուղում աշխատավոր գնդուկ ժողովուրդն իրեն մարմնավորելով Մհերի մեջ, հանձին նրա բողոքում և կըռվում է սոցիալական որոշակի անհավասարության և Սասնա իշխանների սահմանած շար կարգի դեմ։ Այդ կարգը ժողովրդի ուսերին ծանրանում է այն աստիճան, այնքան սրվում է նրա և իշխանի միջև եղած հակասությունը, որ Սասնա Տան (=Հայոց աշխարհի) օրինական տերը՝ Մհերը (=ուամիկ ժողովուրդը) ոչ միայն զրկվում, այլև վոնդվում է Սասունից։ Այդ տիրողների ամենամեծ հարվածն էր, որի առաջ մի պահ տեղի է տալիս նա, հոր գերեզմանի մոտ իր վիճակի սրտաշարժ նկարագրությամբ։

Խերախոտ խերիկ, տուն էլ վեր էլի քըռ անուշ քնուց.

Էսօր մոմուռ ձուն իկեր էր,

Քըռ որտի Մհերի ոտքեր կը մոմըռեր։

«Ա. Ծ.», Ա. 1084—1085

Այս նկարագրությամբ Մհերի մեջ մարմնավորում է «մոմուռ» ճյան պատճառով տառապող և աղատություն տենչող ժողովուրդը, որը վրեժով ու ցասումով լցված կովի է ելնում շար աշխարհի դեմ, նորից շարունակելով իր վիպական «փեհլեվանությունը»։ Սակայն երկար չի տեսամ այդ։ Նրա ցասման ոգին՝ Մհերը մի օր նկատում է, որ «մոմուռ ձուն»-ից «մոմուացող» ոտքերը «թաղվում» են «գետնի» մեջ, «խալիփորցած հողը» այլևս չի վերցնում իրեն։

Զին խեծավ, քշեց մընչ դաշտին.

Գետին հեռջե թուլացիր էր,

Զին կխրվեր մընչ խողին.

Կող շէր դադրի հեռջե Մհերին։

«Ա. Ծ.», Ա. 50

Առաջին հայացրից թվում է, թէ Մհերի ոտքերի տակ «թուլացած» հողը անկայուն, շար աշխարհն է, և Մհերին բավական է թեկուզ մեկ անգամ շըր-

զել այդ աշխարհով և այն կկործանվի։ Սակայն, ճյուղում ծավալվող գործողությունները, ներառյալ և քարայրում Մհերի փակվելը, հիմք չեն տալիս վերոհիշյալ պատկերը այդ կերպ բացատրելու «Թուլացած» հողը անկայում չար աշխարհի ալեգորիան համարելու դեպքում չի պատճառաբանվում քարայրում Մհերի փակվելու արարքը և գալիքի նկատմամբ ունեցած այն համոզմունքը, որը կազմում է նրա կերպարի ու ամրող ճյուղի իդեական բովանդակությունը։ Վեպն, այնուհետև, առհասարակ հողի (լինի այն «Թուլացած», թե ամուր) և չար աշխարհի միջև հավասարության նշան դնելու կամ նույնացնելու ոչ մի փաստ չի տալիս։ Ընդհակառակը՝ հայ ժողովրդի առասպելաբանության մեջ այն հանդես է եկել միանդամայն դրական իմաստով և հանձին վեպի ծեր կնոջ՝ նույնացվել ժողովրդի հետ¹ այնպես, ինչպես «մայր հող», «մայր ժողովուրդ», «մայր հայրենիք» հասկացողությունները։

Ուրեմն «թուլացած» կամ «խալիվորցած հողը» ոչ թե չար աշխարհն է, այլ մեծ Մհերի կամ նրա որդի Դավթի ժամանակների ժողովուրդն է, որը նոր ժամանակներում սոցիալական ուժեղ ճնշումից սթափված նկատում է, որ դեռևս հասունացած չէ իրեն կեղեքով ոչ թե օտարների, այլ ներքին թշնամու, վեպի լեզվով ասած, չար աշխարհի դեմ կովելու համար։

Էլավ, զձին խեծավ,
Կուղեր էլ ըմ փահլեվանություն աներ։

Բայց՝

Զին կխրվեր մընչ խողին.
Խող չէր դադրի հեռջեն Մհերին։

«Ա. Շ.», Ա. 50

Եվ ահա Մհերը փակվում է քարայրում, ոտքի տակ ամուր հող չունենալու և չար աշխարհն անմիջապես խորտակելու անհնարինություններից հուսահատված։ Իսկ եթե սրան ավելացնենք և այն, որ հասարակական նոր հարաբերությունների ու սոցիալական հակասությունների ուժեղացման հետեւ վանիքով արագորեն վերանում էր վիպասանի (=ժողովրդի) միֆական մտածողությունը, որը կայուն հող էր վիպական երգերի, հետեւապես և միֆական հերոսի գոյության ու գործողության համար, ապա միանդամայն պարզ կլինի չար աշխարհի առաջ ժողովրդի ժամանակավոր նահանջը՝ քարայրում Մհերին փակելու մոտիվը։ Այդ անխուսափելի էր, որովհետև «ժողովուրդների սերը դեպ ժողովրդի բարօրության համար մարտնչող հերոսների սիրած կերպարները՝ հին աշխարհի միջտ էլ հույսերի, ձգտումների ու տենչերի զգալի մասի խորտակումը բերող պայմաններում, անխուսափելիորեն հանգեցնում է հերոսի գորության և անխորտակելի ուժի թուլանալու անհրա-

¹ Ակադեմիկոս Ի. Ա. Օրբելին հայ ժողովրդական վեպի պառավ կսօջը համեմատելով հունական Դեմետրայի՝ մայր-հողի և մյուսների հետ, գրում է. «Իր ժարդկացին կերպարանքով, որ ժողովրդական հիշողության մեջ ամրացել է նրա դարձացման ուշ էտապում, մայր-հողի պատկերը հայկական էպոսում ներկայանում է աղքատ պառավի ձեռվ...»։ Տես «Խորհրդային դրականություն», Պետհրատ, Երևան, 1939, Ա 8—9, էջ 18—19։

Ժեշտությանը՝ չարի ձեռքով հերոսին կործանելու հնարավորություն բացող որևէ գծով... կատարյալ հաղթանակի ժամը դեռ չեր հասել և հերոս մարտիկները պետք է կործանվեին չար ուժերի ներգործումից»:¹ Ուրեմն հզորացած տիրողների՝ չար աշխարհի դեմ, պետք էր կովել նոր միջոցներով։ Հասկանալի է և ճյուղում ծավալվող դեպքերի զարգացման ու սոցիալական բարդացող նոր հարաբերությունների տեսակետից խիստ տրամաբանական, որ Մհերը պետք է դուրս գար այդ վիթխարի թատերաբեմից, որպես իր դեռը հրաշալի կերպով կատարած մի դերասան, պետք է անցներ կուլիսների հետեւ՝ մտներ քարայր, բայց ոչ այնտեղ հավիտենապես մնալու, այլ նորից դուրս գալու համար։

Երբ ցորեն էղավ քընց ալուծ,
Ու գարին էղավ քընց մասուր մի։
Հըպա մ' լե հրամանք կա, որ էլնանք իդա տեղեն։

«Ա. Շ.», թ 44

Մհերն անհամբեր սպասում է այդ օրվան։ Այդ սպատճառով նա երբեմն աշխարհ է դուրս գալիս, որպեսզի ստուգի՝ թե չի՝ ամրացել արդյոք հողը. տարին մեկ անգամ բացվում է քարայրի դուռը, չար աշխարհից մարդիկ և այցելում նրան, որպեսզի նրանցից իմանա, թե չի՝ հզորացել արդյոք ժողովուրդը, չի՝ հասել արդյոք հին «դուշման» աշխարհը կործանելու և նորը կերտելու ժամը։

Խորին համոզմունքով և անհամբեր այդ օրվան սպասում է նաև ժողովուրդը, և բնավ պատահական չէ, որ քարայրում փակելով չի մեղցնում, չի մարտում «Սասնա Ծոերի» վերջին ճրագը։

Կեղնի վախթ ըմ, Մհեր դուս կիզա,
Մըդի կազդա դուշմընի ձեռնեն։

«Ա. Շ.», թ 353

Քարայրից Մհերի դուրս գալու մոտիվը ընորոշ է չար աշխարհում աշխատավոր մարդու կեղեքումը, ցասումը, պայքարն ու ապագայի նկատմամբ վառ երազները դրսեռորոշ բոլոր ժողովուրդների առասպելներին և վեպերին։ «Նշանակալի է, որ բազմաթիվ ժողովուրդների մեջ հերոսի քարանձավում արգելվելու մոտիվը միշտ էլ կապված է քարանձավից դուրս գալու կամ նրան քարաժայուին գամող շղթաներից ազատվելու հույսի հետ, միշտ էլ շաղկապված է այսպես թե այնպես իրենց մեջ արևն արտացոլող հերոսների հետ։ Այդպես է Մհերը, այդպես է Պրոմեթեոսը, այդպես է Վրացական Ամիրանը, այդպես է օսական Ամրանը և աբխազական Արբուկիլը»:²

Մհերը պետք է դուրս գա քարայրից, սակայն ոչ որպես հին Մհեր, այլ վերափոխված, չար աշխարհը հիմնահատակ կործանելու ընդունակ, հզորացած նոր Մհեր։ Շահագործող «դուշման» աշխարհը պետք է «Դավթի ավեր»

¹ Ակադեմիկոս Ի. Արքելի «Սասունցի Դավթի» էպոսը, «Սովետական գրականություն», Գետհրատ, Երևան, 1939թ. № 8—9, էջ 19։

² Նույն տեղում, էջ 20։

դառնաւ Մհեր—ժողովրդի ձեռքով և կառուցվի նորը։ Այս է այդ կերպարի վսեմ իմաստը, այս է, որ նրան դարձրել է շար աշխարհի կործանման և նորի կերտման դաղափարի մարմնացումը։

Ի վերջո կարեոր է նկատել, որ քարայրում Մհերի փակվելու ձևարկը, որն ըստ էության նահանջ էր շար աշխարհի առաջ, տիրողների ոչ միայն ֆիզիկական ճնշման, այլև՝ ինչպես գրում է Գորկին, նրանց երկրային թագավորությունը պահպանող բրիստոնեական եկեղեցու երկու հազար տարվա հոռետեսության քարոզի և մակարույծ մանր բուրժուազիայի տգիտության սկեպտիցիզմի հետևանքն էր։ Դրա, միայն դրա հետևանքն էր նաև ինչպես բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդական ֆոլկլորում և վեպում երբեմն հնչող անհուսալիության ու տարակուսանքի նոտաները։ Սակայն հայտնի է, որ այդ նույն ֆոլկլորում անհուսալիության ու տարակուսանքի երբեմն հնչող նոտաների հետ ավելի հզոր, տիրակալ ու տևական կերպով հնչել են արդարացի կովի ու վերջնական հաղթանակի նկատմամբ եղած համոզմունքի, լավատեսության նոտաները, որոնք կազմում են հայ ժողովրդական ֆոլկլորի և վեպի զարկերակը, նրանց գոյության և հարատեսության ամենակարեւոր նախադրյալը։ Այս, անշուշտ, բխում է իր անմահության մասին ժողովրդի ունեցած պայծառ գաղափարից։ Մհերը չի մեռնում քարայրում, նապետք է դուրս գար քարայրից, որովհետեւ անմահ էր իր մեջ մարմնավորած ժողովրդի նման։ Այդ գիտեր Մհերը, այդպես էր ասել նրան իր մեռած հայր՝ Դավիթը։

Դու անմախ ուստի ես.

Դույնեն ավրի, տիր մ' էլ շինվի,

Ուսր գետին քու ծիու հառջիվ դայտամիշ տա,

Դույնեն քուն...»²

«Ա. Ծ.», Ա. 932

Ապագան Մհեր—ժողովրդինն էր, որովհետեւ, շնայած նրա ստրկական գոյավիճակին և երբեմն հնչող անհուսալիության նոտաներին, «կոլեկտիվին հատուկ է եղել անմահության գիտակցությունը և այն համոզմունքը, թե նա կհաղթանակի իրեն թշնամի բոլոր ուժերը»¹ եվ իրոք, անմահ ժողովուրդը ի վերջո կործանեց հինը և հակառակ երկնային ամեն տեսակ քարոզի, աշխարհի մեկ վեցերորդ մասում ստեղծեց իր երկրային հզոր թագավորությունը, որանով իսկ իրագործելով իր դարավոր, նվիրական երազները։

II

Օտար թշնամու դեմ մղված դարավոր հերոսական կովին միշտ նախորդել է ժողովրդի նյութական, բարոյական և հոգեւոր կողոպուտը, որոնք սիմվոլացվել են վեպում իրենց անընդհատ կրկնության և վեպի ժանրային առանձնահատկության շնորհիվ։ Վեպի բանավոր ժանր լինելու հանգամանքը օգնել է հիշյալ երևույթների սիմվոլացմանը նախ այն պատճառով, որ վեպը բովանդակում է ոչ միայն 9-րդ դարի հասարակական տեղաշարժերն ու ուղմական ընդհարումները, այլև 9-րդ դարից առաջ և հետո, մինչև նույնիսկ այս կամ այն ասացողի ժամանակ կատարված քաղաքական անց ու դարձերը, և ապա այն պատճառով, որ ժողովրդի ինչպես ֆիզիկական, այնպիս

¹ Մ. Գորի իր «Թորհրդային գրականության մասին», Պետրատ, Երևան, 1943, էջ 32—33։

էլ հոգևոր կարողությունը մորիլիզացնելու շնորհիվ բոլոր ժամանակների օտար զավթիչների դեմ մղած կռիվները բերվել է մի կիզակետի: Ահա թե ինչու հասարակական այս կամ այն երևույթը՝ հարկահանություն և կողոպուտ, հոգեկան և բարոյական նորմաների ոտնահարում, ազատասիրական ձրդումներ, զինված կռիվ օտար տիրակալության դեմ և այլն, վեպի պատկերներում երևան են գալիս խտացած, թանձրացած տեսքով:

Պետք է նկատել, որ հիշյալ երևույթների խտացումն ու կայունացումը կատարվել է աստիճանաբար՝ դարերի ընթացքում: Ըստ որում, ինչպիսի աստիճանականությամբ վեպում թանձրացել են ժողովրդի նյութական և հոգևոր դարավոր կողոպուտի և այդ ֆոնի վրա ծավալվող ազատագրական հերոսական կռվի փաստերը ու դրանց հետ առընչվող մի շարք այլ երևույթներ, նույնպիսի աստիճանականությամբ էլ թանձրացել, կայունացել են հիշյալ անցուղարձերը բացահայտող պատկերները: Այս շափով այդ պատկերները կտրվել են իրենց որոշակի ժամանակաշրջանից և դարձել են ընդհանուրական ու բնորոշ սոցիալական միանման երևույթներ պարունակող բոլոր էպոխաների համար: Այս նշանակում է, որ վեպի գեղարվեստական այս կամ այն պատկերը ոչ միայն տալիս է իր ստեղծման ժամանակ կատարված երևույթը, այլև արտացոլում է մինչև տվյալ պատկերն ստեղծված և հետո կատարված միանման երևույթները: Այս կերպ կայունանում է պատկերը և ստանում ավելի լայն ու խոր բովանդակություն և դրա հետևանքով նրան հնարավոր չէ պահել որոշ քարտեզի և ժամանակի շրջանակներում: Մինչդեռ հակառակը կատարելով, պատկերում դրսեորված բովանդակությանը երբեմն հատուկ ուշադրություն շենք դարձնում, համարելով այն կամ միփական մտածողության կամ քմահաճ ֆանտազիայի և կամ չպատճառաբանված հիպերոլայի արդյունք: Նմանօրինակ վերաբերմունքը, անտարակույս, անուղղակի կերպով արժեքազրկում է այնպիսի սկատկերներ, ինչպես Կողբադինի հարկահանությունը՝ Սասնա տան ոսկին շատիելը, աղջիկների և կանանց գերեվարումը, Մարութա վանքի ավերումը և այլն, որոնք խտացրել են հայ ժողովրդի անցած պատմական դառն ճանապարհը, նրա նյութական ու բարոյական դարավոր թալանված վիճակը:

Մսրա Մելիք զԿուղբադեն խրկից, էսաց.

— Գնա Սասմա տեղ, մի խարջ առ, էքի.

Կուղբադեն իրի, Զենով Հովանի մոտ, էսաց.

— Զենով Հովան, քենե կուղիմ՝

Քառսուն անծին շուշաք կուղիմ.

Քառսուն անծին էրինջ կուղիմ.

Քառսուն ըղտարեռ ոսկի կուղիմ.

Քառսուն ազապ աղջիկ կուղիմ՝ էրկանք աղան.

Քառսուն էրկեն կնիկ կուղիմ՝ ուղտ բառնան.

«Մ. Ծ.», Ա. 70

Կամ՝

Դավիթ Էլավ գնաց խրողբոր մոտ.

Տեսավ՝ խրողբեր շումիր զարկիր զետին,

Ռոկի կը շափի.

«Մ. Ծ.», Ա. 71

Այս պատկերը որպես «խարջի» տակ կրված ու «չուքիր զետին» զարկած հայ ժողովրդի տնտեսական, բարոյական կողոպուտի և սոցիալական ստրկության պատկերներ, երբեք չեն նսեմացնում այն փաստը, որ կողոպուդ հարստությունը կենտրոնացած է Հովանի մոտ և տանում են նրա տնից: Հովանը «Սասմա» ժողովրդի փորձված հովանավորն է, նրա խորհրդատուն և որպես այդպիսին սերնդից սերումող է անցնում: Նա, ինչպես ցույց է տալիս վեպը, անձնական շահեր չունի: Հովանի տունը՝ սասունցիների տունն է, ինչպես Դավթի ուժը՝ սասունցիների ուժը: Քանի որ վեպու իր ժանրային առանձնահատկության շնորհիվ այս կամ այն երևույթը, գաղափարը, կենտրոնացնում, մարմնավորում է որևէ անձի մեջ, ինչպես ժողովուրդը Դավթի մեջ, այդ պատճառով էլ, այս դեպքում, հայ ժողովրդի սոցիալական ստըրկության փաստը դրսեուրվել է Հովանի մի արարքի մեջ՝ չոքած, ոսկին շափելու միջոցով: Պարզ է ուրեմն, որ վերոհիշյալ պատկերում չոքած Հովանը, այդ դարերով չոքած հայ ժողովուրդն է, իսկ կողոպուդը հարստությունը՝ ժողովրդի հարստությունը: Այս հանգամանքը հաստատվում է վեպի վարիանտներում եղած մի պերճախոս փաստով ևս: Դավիթը կողոպտիշ Կողբադինին Սասունից վոնդելուց, բանտարկված աղջիկներին ու կանանց ազատելուց և ժողովրդին հանգստացնելուց հետո, ասում է՝

Ըմեն մարտ կա, զուր արրանք շանչը, վերցնու:

Ուլ որ արրանք ա դրվե,

Թը կա զուր արրանք վերցնու:

Ուլ որ ոսկի, փուղ ա դրվե,

Թը կա զուր փող, ոսկի վերցնու:

• • • • •

Զաբրանք, զոսգիք, ըզ փող՝

Պոլոր ցրվեց, դվեց ժողովրթին:

«Ա. Շ.», Բ 218

Հայ ժողովրդի սոցիալական ստրկության ընդհանրացման հասած պատկերները կամբողջանան, եթե քննության ենթարկենք նաև նրա հոգևոր կողոպուտը արտացոլող պատկերները:

Դավթի ուժի մասին խոսելիս նշվեց Մարութա բանձր Աստվարածնի ալեգորիկ նշանակությունը, և ցույց տրվեց, որ Մարութիկի պատկերում սիմվոլացվում է նախ՝ նախահոր (ժողովրդի) և ապա «օրոց—կրակ»-ի ուժը: Նշվեց նաև, որ չնայած դրան, ասացողները քիչ են գիտակցում, իսկ երբեմն բոլորովին չեն գիտակցում այդ պատկերի հեթանոսական բովանդակությունը. այդ պատճառով, ինչպես «Մարութա բանձր Աստվարածինը», այնպիսի էլ Մարութա վանքը հանդես են բերում քրիստոնեական պունավորումով: Այլ կերպ հնարավոր էլ չէր, եթե նկատի ունենք էպոխան, և այն, որ ոչ միայն 9-րդ դարում, այլև նըանից շատ դարեր առաջ և հետո, մինչև նույնիսկ 19-րդ դարի վերջին ասացողը հավատացել է քրիստոնեական կրոնին: Բնական է, որ նա կամա թե ակամա, պետք է այդ հավատը դրսեռեր վեպի որոշ էպիզոդների և հերոսների մեջ: Եվ մենք տեսնում ենք, որ բացառությունը աստվածամարտ Փոքր ՄՀերի, վեպի գրեթե բոլոր հերոսները աստվածամարտ են: Դավիթն, օրինակ, առանձին ակնածանքով է վերաբերվում

Սասնա կրոնավորներին, հովանավորում և պաշտպանում է նրանց. Նա ամեն մի հակատամարտից և նույնիսկ թշնամու գլխին իջեցրած ամեն մի հարվածից առաջ, որպես կանոն, դիմում է «Խաչ պատարագնին» և «Սուրբ Մարութա բանձր Աստվարածնին» իր քաղկին ուժ տալու և հարվածը շեշտակի դարձնելու համար։ Ժողովրդի մտածողության մեջ արմատացած քրիստոնեական գույնավորում ստացած հեթանոսական հավատը ոգեշնչում է վեպի հերոսներին։ Այս հանդամանքը չի վրիպել օտար թշնամու աշխից։ Եվ ամեն անդամ, երբ նրանց հաջողվել է կոտրել Ժողովրդի դիմադրությունը, քանդել և ավերել են առաջին հերթին նրա պաշտամունքի առարկան կամ վայրը։ Այդ երևում է «Կարոս խաչ» վիպական երգում և հայ ժողովրդական վեպում։

Մարտ Մելիք

Էսաց — Կուզբաղին, քու թադարիք տիս,

Տերթաս Սասմա սար,

Մարութա բանձր Աստվարածին թալնիս, ավիրիս, կաս:

Կուզբաղին քեշից, կինաց վար վանքին։

Զվանք քակից, զըմեն ավիրից

Ինչ որ կը եր՝ խուրտից, առից, տարավ։

«Ս. Ծ.», Ա 185—186

Ինչպես «Սասմա» աղջիկների ու կանանց առևանգումն ու «դիգած» ոսկու «թալանը» արտացոլում են հայ ժողովրդի հարստության և բարոյականի դարավոր կողոպուտը, այնպես էլ Մարութա վանքի «թալանն ու ավերում»-ը արտացոլում են հայ ժողովրդի հոգեոր կողոպուտը, նրա սրբության և հավատքի դարավոր ոտնահարումը։ Այս պատկերն անշուշտ, տեղ չէր գտնի վեպում, եթե այդ հայ ժողովրդի կյանքում լիներ եզակի դեպք և որ կարեորն է որպես հավատք արմատներ չունենար ժողովրդի հոգեկան աշխարհում։ Նրա առկայությունը վկայում է նմանօրինակ դեպքերի անընդհատ կրկնությունը այնպես, ինչպես Դավիթի հերոսական գործողությունները վկայում են հայոց աշխարհի վրա օտար թշնամու հարձակման անընդհատ ու տեական կրկնության մասին։

Վերոհիշյալ պատկերի բովանդակությունն ավելի բնդկճվում է, եթե այն արվում է նույն միտքը թանձրացնող բնության նկարագրության հետ։ Այն սարը, ուր գտնվում է ավերված Մարութիկը «սարսափելի» և է և մութ։ Սակայն «Մարութա լեղին կտրող» այդ մթության ու խավարի մեջ Մարութիկի ավերակներից բխում է փրկության «բոց—կրակ»-ը։

Դավիթի ասում է՝

Սիվ սարն ընցկո՞ւն սարսափելի.

Կը ծկըծուց ինկե նա սար—ծուր մուծ

Մարթու լեղին ընցկուն կը կտրը։

«Ս. Ծ.», Ա 507

Ապա

Կը տիսնա, կը խը՝ մարմար քար ընեկվիր,
Կանաշ-կարմիր բոց կայնիր վերա:
Կը սըրսփա, չգըշխնա մոտիսաս գա:

«Ս. Ծ.», Ա. 508

և ապա

Բոցին թամաշա կանի,
Կըհա մոտ, ձեռ կտա բոցին,— շիրիցի ձեռ.
Խուղ կը թալի,— շընցնի:
Նոր ուր խելքին մեջ կմտածի,
«Նա Մարութիկ բանձր Աստվարածին կրսին, նա ի»:

«Ս. Ծ.», Ա. 665

«Միվ» սարի և Մարութիկից բխող «բոց—կրակի» պատկերը կարևոր նշանակություն է ստանում հատկապես այն պատճառով, որ վիպասանները այն նույնացնում են ավերված,— բայց ոտքի կանգնելու և իրեն սլաշտպանելու ընդունակ հայոց աշխարհի և ժողովրդի հետ այնպես, ինչպես խիստ ուժեղ կրոնական գումավորում ստացած «Կարոս խաչ» վիպական երգում /սալր— «խայոց ազգի» հետ: Քուրդ պարոնին «կատաղեցնող» ուժը վերադրում են ոչ թե խաչին, այլ «խայոց ազգ»-ին:

Են խարիր հիսում տարեկան շան գզիր
Ելավ խելք գցեց քուրդ պարոնին—
Ասաց— էն քան չի կարոս խաչին
Էն քան ա խայոց ազգին»:¹

Եթե Մարութիկն իր ավերակներով, իսկ սև սարն իր սարսափելի մթությամբ ալեգորիկ կերպով բացահայտում են ավեր ու ավար դարձած հայոց աշխարհն ու խավարի ծովում դարերով խարխափող հայ ժողովրդի վիճակը, ապա՝ սև սարի մթության մեջ Մարութիկի ավերակներից բխող «բոց—կրակը» ազդարարում է՝ ժողովրդի վերածննդի հնարավորության և թշնամուղեմ նրա հոգում կուտակված վրեժի՝ «բոց—կրակի» մասին:

Ժողովրդի թե տառապանքը և թե այդ ֆոնի վրա բարձրացող ըմբոստությունը, կրկնում ենք, «Կարոս խաչ»-ում և վեպի մի քանի էպիզոդներում արտահայտվել է կրոնական գումավորումով, կրոնական նախապաշտումների որոշակի կնիքով: Այլ կերպ, ինչպես նկատել ենք, չեր էլ կարող լինել, եթե շանտեսենք խտորիզմի սկզբունքը, և այն, որ վեպը մասսաների մեջ ապրելու և նրանց վրա ներգործելու համար, անհրաժեշտորեն պետք է արտացոլեր նաև մասսաների նախապաշտումները: Էնդեւոր խոսելով քաղաքական ժողովրդական երգերի մասին, գրում է՝ «Առհասարակ անցյալ ուղղուցիսների պոեզիան (միշտ բացառելով Մարտելյոզը) հազվադեպ է ուղղուցիսների ազգեցություն ունենում ավելի հետագա ժամանակներում, որովնետե մասսաների վրա ներգործելու համար, նա այնտե է արտացոլի նաև մասսաների նախապաշտումները»² (ընդդումը իմն է — Գ. Գ.): Եթե ան-

¹ «Փըրանքներ», էջ 14:² «Մարքոր և էնդեւոր արվեստի մասին», Պետհրատ, Երևան—Մոսկվա, 1934 թ., էջ 258:

յալի ժողովրդական, նույնիսկ ուսուցիոն երգերը պետք է արտացոլեին մասսաների, կրոնական նախապաշարումները, մասսաների վրա ներգործելու համար, ապա պարզ է, որ 9-րդ դարում ձևավորված և ապա ստեղծագործական պրոցես ապրած հայ ժողովրդական հերոսավեպը, որ արտացոլում է արտաքին և ներքին թշնամու դեմ ժողովրդի մզած դարավոր պայքարը, անխուսափելիորեն պետք է դրսեորեր ժողովրդի նախապաշարումները խաչ պատարագնի կամ «Մարութաբանձր Աստվարածնի» միջոցով, որպեսզի վերջինիս ավերակներով (որ թշնամու հարձակման հետեանք էր) էլ ավելի բորբոքեր ժողովրդի վրեժինդրության կրակը և դիմադրության սգին: Սակայն, այդ երեսութիւ մի կողմն է միայն: Շատ կարեոր է նկատել, որ այս կամ այն գաղափարը կրոնական գունավորում ստացած պատկերով, հետեապես և մասսաների նախապաշարումներով արտահայտելու հանգամանքը բնավ չի բացառել և չի բացառում հենց նույն պատկերում եղած միանգամայն հակադիր հայացքը, ժողովրդի դարավոր փորձի արդյունք հանդիսացող, ճանաշողական անփոխարինելի մեծ ուժ ունեցող այն հայացքը, որը երկնքից իջեցնում էր բոլոր աստվածներին, ժողովրդի դիտակցությունից աստիճանաբար դուրս կորզում նախապաշարումները և դրանով իսկ մահացու հարված հասցնում նրա պաշտոնական քարոզիչներին ու վերջիններիս հովանավորներին: «Մարութաբանձր Աստվարածնի» և նման այլ պատկերների բովանդակության իրարամերժ բնույթը, քրիստոնեական հավատի ու կյանքի մասին ժողովրդի ռեալ մտածողության միջև եղած տարբերության և տեսական պայքարի արդյունք է: «Մարութաբանձր Աստվարածնի» հետ կապված հետագաղերը արտացոլում են հայրենիքը սրով պաշտպանելու գաղափարը, որն օբեկտիվորեն ժխտելով պատկերում եղած կրոնական գունավորումն ու իմաստը, դառնում է հիշյալ հակամարտությունն արտահայտող կարեոր փաստերից մեկը:

Դավիթը Հովանի օգնությամբ դիշերը վերաշինում է Մարութիկը: Առավոտյան տեսնում են նորից ավերված:

Են դիշեր կը քնին, կը տիսնան

Մարութաբանձր Աստվարածին շկա:

«Ե. Ծ.», Ա. 665

Այս հանգամանքը զարմացնում է Դավիթին և հորեղբորը: Հաջորդ գիշերը լուծվում է առեղծվածը: Դավիթը երազ է տեսնում: Երազում Մարութիկն ասում է, որ ինքը կանգուն կմնա միայն այն դեպքում, եթե իր հիմքում դրվի Դավիթի «խանչալը»:

Խանչալ քու մեշքեն քեշի,

Խիմ խանչալի վրեն էսկի:

Խլիսուն Դավիթ կը լի վեր.

Խանչալ ուր մեշքեն կը քեշի,

Խիմ վրեն կը դնեն:

Նոր բանձրիկ Մարութաբանձրին

Կայնի վեր ուր խման:

«Ե. Ծ.», Ա. 666

Կառուցվածքի, հատկապես տան հիմքում որևէ բան դնելը վաղեմի սովորություն է: Մինչև այժմ էլ գյուղերում՝ հին սերնդի որոշ ներկայացուցիչների մոտ պահպել է այդ սովորությունը: Կառուցվող տան հիմքում դնում են արծաթ կամ պղնձյա դրամ, որը տունը հարստությամբ լցվելու ցանկության ալեգորիկ արտահայտությունն է: Երբեմն դնում են նաև հացի կտոր, ցանկանալով, որ կառուցվող տունը լցվի հացով և այլն: Վերաշինվող Մարութիկի հիմքում Դավիթը դնում է իր «խանչալը»: Երեսութը եղակի է, բայց ընորոշ ու տիպական, որովհետև Մարութիկի (=Սասմա տան, հայոց աշխարհի) հիմքում «խանչալ» դնելու անհրաժեշտությունը բխում էր հայ ժողովրդի ապրած պատմական դառն ճակատադրից և դարավոր փորձի արդյունք հանդիսացող այն խոր համոզմունքից, թե անհնար է ազատ մնալ օտար թշնամու կարծանարար սրից, առանց նրա դեմ սուր շարժելու, առանց սիանչալից վրա հիմնելու իր գոյության իրավունքը: «Ատամն ընդ ատաման», — սրի դեմ սուր: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ուղղակի ժխտվում են ամի կալ հակառակ շարին», «ապավինիր երկնային գոյությունը» և նման աշլ ապսուրդներ: Ժողովրդի առողջ միտքն ու բանականությունը մի կողմ է նետում տիրողների կողմից դարերով սրբագրծված հնոտին և կրծանարար թույնը: Նա իր վիճակը տնօրինում է ինքը՝ տան հիմքում դնում է «խանչալը», իսկ ձեռքում թուր կայծակին, համոզված լինելով, որ «Սասման ջոջ տունը» շեն ու պայծառ կմնա նման գործելակերպով միայն: Այսպես է մտածել նաև վիպասանը, և պատահական չէ, որ պատումն ավարտն է հետևյալ ուշագրավ վերջաբանով:

Քառուն ողորմին տանը Սասման ջոջ տան:

Շեն ու պոծառ կենա

Մարութա բանձր Աստվարածին վրբ ուր խրման:

«Ա. Ծ.», Ա. 700

Պետք է նկատել, որ Մարութիկի հիմքում դրված «խանչալը» անսահման հեռու է ուազմամոլությունն ընդհանրացնելու դաշտարից: Այն ընդհանրացնում է հայրենի և օտար զավթիչներից հայոց աշխարհն ու հայ ժողովրդը սրով, կովով պաշտպանելու գաղափարը միայն: Այդ իդեալի կոնկրետ արտահայտությունն է նաև Դավիթը՝ վեպում ծավալվող գյուցազնական գործողություններով և «Սասման Ծոեր» հերոսավեպը ամբողջությամբ վերցրած:

III

Հայ ժողովրդական խաղիկներում և գուսանական ժողովրդական տաղերում՝ սիմվոլիկ կամ ալեգորիկ իմաստ են ստացել այնպիսի առարկաներ, ինչպես՝ կուժ, ջուր, խնձոր, ոսկի խնձոր և այլն: Գեղջուկ սիրահարները խնձույթի, ուրախության կամ տիրության պահին իրենց սերն արտահայտել են այդ առարկաների գործածությամբ, այդ առարկաների միջոցով: Սափորն ուախն ջրի գնացող գեղջկուհուն շարունակ հետապնդել է սիրահար տղան և ջուր (սեր) խնդրել նրանից: Բերենք բազմաթիվ օրինակներից միայն երկուսը:

Շառի տակին պաղ աղբյուր,
Արծաթե թաս, ոսկի շուր
Ես կը վառվիմ քո սիրուն
Թաս մի կուզեմ, երկուս տուր:¹

Կամ²

Երկու թուխ և աղվող աղջիկ.
Նոշըպովն ջուրն են եկեր.
Երկու փեհլիվան կտրիձ՝
Զին հեծեր ու սեյր ին ելեր:
— Աղջիկ աղբորդ արեվուն
Նոշըպեն պտիկ մի ջուր տուր.
— Զուրս տաք է, չէ պաղեր
Մեր սիրուն շատ մարդ է մեռեր:²

Սերն արտահայտվել է նաև խնձորի միջոցով: Աղջիկը կամ տղան, մեծ մասամբ աղջիկները, որպես սիրո նշան, սիրած տղային ուղարկում են խընձոր: Խնձորի այս ալեգորիան դալիս է վաղեմի ժամանակներից: Ժողովրդական հեքիաթներում թադավորի աղջիկն ընտրությունը կատարում է «Հավանած» կամ սիրած տղային խնձորով հարվածելու միջոցով: Այդպես է հայտնում իր սերը նաև Խանդութ Խաթունը,

Խանդութ Խաթուն՝ որ աշք ընկավ
ԶԴավիթ տեսավ՝ ուրախացավ.
Ուրախութնե խնձոր մ՝ էզար Դավթին,
Դավիթ զինձոր բոնեց վար ձիուն
Խնդացավ վար խնձորին:

«Ա. Ծ.Ծ, Ա. 33

«Պղնձե քաղաքի թագավորի» աղջիկը իր սերը հայտնում է Բաղդասարին կժի, զրի և խնձորի օդնությամբ կառուցված ալեգորիկ պատկերով.

Պղնձե քաղաքի թագավորի աղջիկ
Մի կուժ լիք ջուր էր լցրե,
Խնձուր բերան դրե.
Մի կուժ էլ դարդակ էր բերան դրե,
Թղթի մեջ կիրիր էր
• • • • * •
Բաղդասար տղա,
Բնձի շատ տուր կը գաս տու:

«Ա. Ծ.Ծ, Ա. 143

¹ «Աղպապրական հանդես» է—ը, էջ 442:² Պրոֆ. դ-ր. Մանուկ Արեգյան—«Գոււանական ժողովրդական տաղեր», Պետհրատ, Երևան, 1940, էջ 170:

Բերած օրինակները ցույց են տալիս, որ խնձորը սիրո իրեղեն արտահայտությունն է, նրա սիմվոլը: Դրա համար հիմք է ծառայել խնձորի և աղջկա նույնացման գաղափարը, որը տարբեր նրբերանգներով դրսեորվել է ինչպես հայ, այնպես էլ մյուս ժողովուրդների բանավոր ստեղծագործության մեջ:

Խնձորը գլորել եմ,
Ճամփիցը մոլորել եմ,
Իրեք տարի միաւար
Քեզ վրա սովորել եմ:¹

Կամ

— Հայվան իր ծառին ճղին,
Սիրտն է սև, երեսը դեղին,
Երնեկ խնձորին ծառին,
Իր ծառին ու իր տերեկին:
Գիտեմ՝ դուն զօր դեղ ունիս,
Բեր, տուր ինձ, որ ես լավանամ.
Թե տաս, երթամ լավանամ.
Թե չի տաս, երթամ, մեռանիմ,
Քեզ ալ կանչիմ՝ «Մարդուապան»:
— Խնձոր ես ծառու ճղեր
Եեկ անուշ՝ դեռ չէ հասեր:

Այս հայրենի մեջ «Հայվան» (սերկելի) տղան է, իսկ «խնձորի ծառն» ու «խնձորը»՝ աղջիկը:

Վրացական ժողովրդական երգերից մեկում աղջկա և խնձորի նույնությունը տրվում է հետեւյալ կերպ: Սիրահար տղան երգում է՝

«Առուն վազում է, հուղված է. լողում են երկու²
խնձորներ: Ահա իմ սիրածը վերադառնում է, տեսնում
եմ, ինչպես նա դիմարկով է անում»:

Նկատենք, որ բոլոր ժողովրդական երգերում սերն արտահայտվել է նուև արծաթ ու մեծ մասամբ ուսկի խնձորի միջոցով. այդ սլատճառով, երբեմն, խնձորի կայտնացած էպիտետ ուսկին ևս նույնացվել է աղջկա հետ: Օրինակ, սլավոնական ժողովրդական երգերում հարսնացուն իրեն համեմատում է ուկու, իսկ փեսային՝ Դարբնի հետ:

Ոսկի էպիտետով խնձորը որպես աղջիկ, հանդես է գալիս ինչպես հայ ժողովրդական երգերում, այնպես էլ «Սասնա Շոեր» հերոսավեպում: Քաջանց թագավորի աղջկա և «ամարաթներ»-ի մասին Սանասարի, իսկ որոշ պատում-

¹ Պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյան՝ «Ժողովրդական խաղիկներ», Հայպետհրատ, Երևան, 1940, էջ՝ 362:

² Պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյան՝ «Գուսանական ժողովրդական տաղեր», Երմանի հրատարակչություն, Երևան, 1940, էջ՝ 76:

ներում թաղթասարի տված հարցերին, այդ երկրի ծերունի հայը հետեւյալ սկա-
տասխանն է տալիս:

1) — Էս սիվ փանջարեք, սա ամարաթնիր կտիսնա՞ս,—
Թագավորի աղջկան բնակարանն ի.
Կը տիսնա՞ս էդ սիվ հիրդիսնիր:
Ասաց,— էնի սիվ փառդայ ի կապած հիրդիսներուն,
Որ աղջիկ տուո շտիսնա:
Տղեն ասաց.— Ափո՛,
Էս ի՞նչ ի, տանիս ճրագի պես կը վառվա:
Ասաց.— որտի էնի ոսկի խնձուր ի,
Գորզ ըմ կա էնու հիրդիսնիրու տակ,
Ինչ ղվաթով էլնի՝ էն գորզ վիրուցի,
Զարկե էն ոսկի խնձուր բերի տակ, դնի ուր. ծուց
Թագավորի խիտ կոփով անե, կտրին էլնի,
Աղջիկ կտանի իրեն:

«Ա. Ծ.», Ա 149

Տարակույս չի կարող լինել, որ «տանիսում ճրագի պես» վառվող ոսկի
խնձորը ապարանքում բանտարկված աղջիկն է:

Սակայն այդ, պատկերի միայն մի կողմն է, և դրանով բոլորովին չի
սպառվում նրա մի քանի առումով խիստ ուշագրավ բովանդակությունը: Այն,
հիշյալ երևութից բացի, նախ և առաջ սիմվոլացնում է կնոջ, հատկապես
աղջկա դարավոր ստրկական վիճակը, որի դեմ շարունակ բողոքել է կինը՝
միանձնության մեջ հորինած իր բազմաթիվ սրտաշարժ երգերում: «Սիվ փառ-
դայ»-ներով, «հիրդիսնիր»-ը ծածկած «բնակարանը» մի կատարյալ բանտ է,
ուր տառապում է կինը ազատության և լույս աշխարհ տեսնելու կարուտով:
Նույն ենք տեսնում նաև ժողովրդական այլ երգերում, նրանց մեջ հիշված
վանականները և վանդակներում (=տներում) փակված աղջիկները ոշնչով շեն
տարբերվում ժողովրդական վեպի «սիվ հիրդիսնիր»-ով բնակարանից, նրա
մեջ փակված ու «տուո շտիսնա»-լու վճռով դատապարտված աղջկանից:

Այդ պատկերն, այնուհետև ալեգորիկ կերպով դրսեորում է կնոջ սոցիա-
լական ստրկության կարգանքների ոշնչացման գաղափարը: Աղջկա «հիրդիս-
ների» տակ դրված «գուրզը» կնոջ ազատագրման ճանապարհին եղած մեծա-
գույն արգելքի ալեգորիան է: Ժողովուրդը մտածել է այդ արգելքի հաղթա-
հարման մասին: Շարունակ երազել ու սպասել է մի «կտրիճ»-ի, որ դա,
«գուրզը վիրուցի» մի կողմ նետի և «էն ոսկի խնձուր բերի տակ, դնի ուր ծոց»,
որովհետև մերժել է կնոջ ստրկացման ֆեռդալական-ասպետական վարքագի-
ծը և պաշտպանել նրա ազատ, տղամարդուն իրավահավատար ընկեր լինելու
գաղափարը: Եվ իրոք, տեսնում ենք, որ ինչպես հայ ժողովրդական երգերում
ու գուսանական ժողովրդական տաղերում, այնպես էլ հերոսավեպում, կինը
դրսեորվել է որպես տղամարդուն կյանքի, աշխատանքի և հերոսության մղող
մի ուժ: Վեպի հանդութ Խաթունը ժողովրդի ազատ և ինքնուրույն կնոջ տի-
պարն է, նա իր ուժով ու հերոսական գործողությամբ նման ու հավասար է
Դավթին: Վեպը մի շարք էպիգոդներում արդարացրել ու պաշտպանել է Խան-
դութի մասին Քեռի թորոսի ասած այն թևավոր խոսքը, թե՝ «Առյուծն առյուծ

ա, եղնի էգ, թե ործ, կամ Դավթին ուղղված Խանդութի այն արտահայտությունը, թե՝ «Դու քո հոր կտրիմն ես, ես էլ իմ»։ Այսպիսով, վեպում, ժողովուրդը կնոջ դարավոր ստրկական վիճակը սիմվոլացնելով հանդերձ, ինչպես տեսնում ենք, շի մնացել նրա սոցիալական ստրկության միջնադարյան ֆեոդալական-ասպետական գաղափարի աստիճանի վրա։ Իր հերոսի միջոցով մի կողմ է նետել «գուրզը», ազատել նրան վանդակից և «Սիվ հիրդիսնիրով» բնակարան բանտից, հանձին Խանդութի պաշտպանելով տղամարդ առյուծին հավասար լինելու գաղափարը։

Ըստ վեպի, կինը պետք է լինի ոսկե խնձորի պես գեղեցիկ և «Ճրագի» նման վառվող, ինչպես Քառսուն Ճող Շամբ։ Չրջահայաց և իմաստուն, ինչպես Գոհարը. անձնուրաց Հայրենասեր, ինչպես Շովինարը. ունենա առյուծի սիրտ, լինի կտրիմ, ինչպես Խանդութ Խաթունը։ Այս է կնոջ գեղեցկության մասին ժողովրդի ունեցած պատկերացումը։ Այստեղից էլ ժողովրդի այն ուշագրավ Հայացքը, որ կարծրացած է վերոհիշյալ սիմվոլիկ պատկերում, թե նման գեղեցկին և նրա սիրուն «տիրանալ» ցանկացողը իր արժանիքներով պետք է հավասարվի նրան, լինի կտրիմ և, որ կարեռն է, հաղթահարի մի շարք գերբնական դժվարություններ։ Ժողովրդի սիրած հերոս Սանասարը անցնում է այդ փորձության բովով։ Նա «տանիսից» վերցնում է «Ճրագի» պես վառվող խնձորը, մի կողմ է նետում հիրդիսնիրի» տակ դրված ծանր «գուրզը», մի քանի պատումներում իշնում է ծովի հատակը և հանում վիշտապի բերնում պահված մատանին, որ քանտարկված աղջկա ալեգորիան է, կովում է թագավորի «քառասուն գոմշանման փահլիվանների» դեմ, հաղթում նրանց և տանում Քառսուն Ճող Շամին։ Դավիթն էլ այդօրինակ արգելքներ հաղթահարելու գնով է միայն, որ նվաճում է Խանդութի սերը։ Նա էլ սպանում է Խանդութի դռնապաններին, նրա քառասուն փեսացուներին, կովում երկիրը շրջապատած թշնամիններ Օղան Տողան թագավորի և Լոռու Հմզա փահլեվանի դեմ, սպանում և բերում նրանց գլուխները որպես հաղթանակի նշան։ Այդ բոլորից հետո մենամարտում է Խանդութի հետ, հաղթում նրան և նոր միայն ստանում ամուսնության համաձայնությունը։ Այսպիսով, վեպի դրական հերոսուհինները համաձայնում են ամուսնանալ միայն նրանց հետ, ովքեր գոտեմարտում հաղթում են իրենց կամ կատարում առաջարկած դժվարագույն պայմանները։ Այս տեսակետից հետաքրքրական օրինակ է «Քաջանց երկրի» թագավորի աղջկա և Սանասարի խոսակցությունը։

2) Խանըմ կը կանչը. — Ա՞յ մարթ, տու ի՞շ կանըս էտա տեիր
Կասը. — Քը խամար իմ իկիր։

Կասը. — Էավ, ձի խամար իս իկիր, էանա՞ս ձի ջնար տաս։

Սանասար կասը. — Էա՞վ։

Խանըմ կասը. — Կը տիսնաս դարդիսի գըլոխ էնա խնծուր,
Թի պիրիցըր ան խնծուր տակ, լավ։

Թի շկարցար, քի կանիմ քար։

«Ս. Ծ.», Ա 612—613

Եթե այս պատկերում աղջկան հաղթելը արտահայտվում է խնձորը վերցնելու գործողությամբ, ապա դրան հաջորդող մի այլ պատկերում նույն միտքը տրվում է ուղղակի կերպով։ Քաջանց երկրից դուրս գալուց հետո Սանասա-

րին ու Բաղդասարին գոտեմարտի է կանչում Քառուուն Ճող Շամի ծպտյալ քույրը, որը Խանդութի նման որոշել էր՝ «Ահղ» էր «ըրը», թե՝
Ո՞ր կը գա, իմ քամակ կը դնի գետըն, իւ զեն կառնիմ:

«Ա. Ծ.», Ա. 459

«Կտրիճին» արժանի է միայն «կտրիճը». Հերոս գեղեցկուն արժանի է միայն «զորեղը», հերոս տղամարդը: Այս է ժողովրդի խորին համոզմունքը: Այս հայացքի պաշտպանումն ու իլուստրացիան են վեպում ծավալվող ուշագրավ այնպիսի միջադեպեր, ինչպես օրինակ, Քառուուն Ճող Շամի սիրագիրն ստանալուց հետո Սանասարի ու Բաղդասարի և Խանդութի թշնամիներին սպանելուց հետո Դավթի ու Հովհանի միջև ծագած կոհվները և այլն: Եվ իրոք, երբ խորանում ենք հիշյալ կոհվները դրսելորող պատկերների իմաստի մեջ, հանգում ենք այն եղբակացության, որ այդ կոհվների պատճառը ժողովրդի սահմանած՝ «կտրիճը կտրիճին» օրենքի խախտումն է: Հովհանն ու Բաղդասարը այն համոզմունքին են, թե իրենք «կտրիճ» են Դավթից ու Սանասարից և հետևապես իրենց են արժանի գեղեցիկ «կտրիճ»-ունիները: Սակայն, եթե կոնկրետ փաստը հակառակն է ապացուցում, նրանք ինքնակամ զիջում են իրենց դիրքերը, խոստովանում իրենց սխալը:

3) Բաղդասար կասը Սանասարին.

— Յան յիս քի տը սպանիմ, յան տու զի:
Սանասար կըսը.— Անվրե՝, սարար ի՞նչ:
Բաղդասար կըսը.— Տու գախտիկ պա մ՝ կանիս.
Տու թովստ ըմ հորողկիր իս ան ախճկան,
Անվրե՝ տու ձի խաբար շիս տվիր:

և այնուհետև՝

Ելան մա հավշին կովան:
Բաղդասար ասկոն ոժ ուներ, կը զարկեր Սանասարին
Սանասար ինք զինք կ'ասը «Զտա՛տարը»:
Ուր միտ վե կ'ըսեր. «Բալքի մ՝ տատրը ձենեա:
Բաղդասար շտատարը, հարու կը զարկի:
Սանասար ինք զինք կ'ասը «Զտա՛տարը»:
Վի կ'իլնի զԲաղդասար կը զարկը՝ գետին:
Որ կը զարկը՝ գետին, Բաղդասար կըսը.
— Սանասար թո՛ւղ, թո՛ւղ, հիս ք՝ ախպերն իմ.
Արի՛, քարշինք, իլինք վե, տու վըր ձի կըտրին իս:
Կ'ըսը, ախպե՛ր, ես քի դաստուր տվիր իմ,
Իլի վե, զնա, են խանում ա՛ն, պի՛:

«Ա. Ծ.», Ա. 611

Կամ

— Ես շրբ զբանա՝ դու քանց ձի կուվարլը էր.
Ելի, զնա, ան աղշիկ քու խամար քի:

«Ա. Ծ.», Ա. 539

Զենով Հովհանի և Դավթի կոհվը:

4) Խոսք մէնու մոտեն, մեկ էնու մոտեն, կը խասին հիրար:
Ինչ Զենով Հովհան ա,

Սրտով կը զանա, որ ըգխանդուտ առնի,
ինչ Դավիթն ա թունա կ'անի խետ:
Դավիթ կ'ասա. «Չէ, նա ըզի տը սպանա.
Մեկ զեն թալիմ գետին, խենք»:
Ըզ Զենով Հովան կը թալա գետին:
Զենով Հովան կ'ասա.
— Դավիթ, շէլնի՝ ձի տը սպանես:

«Ա. Ծ.», Ա. 926

Ժողովուրդը պաշտպանելով «կտրիճը կտրիճին» գաղափարը, միաժամանակ իր ժիւտական վերաբերմունքն է ցույց տալիս հակառակ դավանանքի՝ ֆեոդալական-ասպետական բովանդակություն ստացած սիրո և նրա երկրպագուների նկատմամբ: Ժողովրդին խորթ է եղել ու է, սիրուն կուրորեն հանձնըվելու, սիրածի համաձայնությունն ստանալու համար նրա դուանը ճերմակելու կամ քար դառնալու շափ սպասելու վարքագիծը: Սիրո ասպետական ոռմանտիկան, որ գովերգվել է ասպետի սերն ու գործերը պատկերող արկածային վեպերում, շէր կարող և չի էլ հրապուրել ժողովրդին, որի համար սերը ոչ թե ծերություն կամ քարացում տանող մի ուժ է, այլ, ինչպես նկատել ենք, կյանքի, աշխատանքի և հերոսության ազդակ: Այս իմաստով բնավ պատահական շպետք է համարել այնպիսի ուշագրավ հակադրություններ, ինչպես Քառուն Ճող Շամի համար Պղնձե քաղաքում կովող Սանասարը և նրա պատերի, տակ Քառուն Ճող Շամի սիրուն սպասելուց ծերացած մարդիկ:

5) Գնաց ճասավ Պղնձե քաղքի պատի տակ.

Տեսավ, որ քառուն Ճիավոր ընդի,
Մորուս Էկիր ի, դեղին ի դարձած,
Էնքան մնացած ին:

«Ա. Ծ.», Ա. 147

Կամ

Էնտեղ քառուն մարթ, ջահել մարթ, սըվորկերնս մարթ
Չուր մեշը ինի քար տարցած կալնած էնտեիւ:

«Ա. Ծ.», Ա. 612

Նույնը պետք է ասել նաև Խանդութի համաձայնությանն սպասող քառասուն փեսացուների մասին: Խանդութի բերդում Դավիթի կատարած գործողությունները քառասուն փեսացուների վարքագին հակադրելու և Խանդութի ու Դավիթի ամուսնության փաստով վիպասանները ժխտել ու ծաղրել են նրանց տիսլիկ ֆեոդալական-ասպետական վարքագիծը, որը հիշեցնում է Պենելոպա-ի համաձայնությանն սպասող արքեցող ու ցանկասեր հոմանիներին՝ այն տարբերությամբ միայն, որ առաջինները բերդում տարինները մաշում են իրենց հարստության հաշվին, իսկ վերջինները Ոդիսեսի անհուն գանձը խժուիվ: Եվ այնուհետև, Պղնձե քաղաքում Քառուն Ճող Շամի համար Սանասարի մղած «կտրիճին» վայել հերոսական կոհիվը պաշտպանելով, վիպասանները ժխտել ու ծաղրել են նույն Քառուն Ճող Շամին սոլասող, նրա քաղաքի պարիսպների տակ «գեղին սըվորկերնս» ու «Չուր մեշը ինի քար տւրցած, կայնած» մարդկանց, հետևապես և գեղեցկին ու նրա սիրուն հասնելու ֆեոդալական-ասպետական ոռմանտիկան:

Այսպիսով, վերոհիշյալ առաջին պատկերը ուկն խնձորի ու գեղեցիկ աղջկա նույնության գաղափարը արտացոլելու հետ միասին, սիմվոլացրել է՝

ինչպես կնոց դարավոր ստրկական վիճակը և նրա ազատագրման ճանապարհին ընկած մեծագույն արգելքի ալեգորիան «գուրզի» պատկերով, այնպիսէ լ գեղեցկին հասնելու համար վիպական դույն ստացած արգելքի հաղթահարումը և «կտրիճը կտրիճին» գաղափարը, հակադրելով այն գեղեցկին ու նրա սիրուն հասնելու համար իշխողների դավանած վարքագծին, ֆեոդալական-ապետական անկենսունակ և անիմաստ ոռմանտիկային:

IV

Կերոհիշյալ պատկերների, իդեական-հասարակական բովանդակության բացահայտումը լույս է սփռում նաև նրանց կոմպոզիցիոն նշանակության վրա այն շափով, ինչ շափով որ վերջինս սերտորեն կապված է առաջինի հետ:

Էպոսով գրադվողներից ոմանք (Կվարցով, Պոսպելով և այլն) էպոսի մի քանի պատկերներն ու ալեգորիաները համարելով պայմանականություններ և ֆորմուլաներ, անուղղակի կերպով նրանց տվիչ են ստատիկ, մի անգամ ընդմիշտ քարացած պատկերների բնույթ, որոնք իբր, էպոսում տեղ են գտել միայն տրադիցիայի շնորհիվ։ Նման մեկնաբանությամբ տնտեսվել է իսկական գեղարվեստական ընդհանրացած պատկերների գոյացման, ձևավորման և նրանց բովանդակության աստիճանական թանձրացման հանդամանքը, որը, ինչպես տեսանք, սերտորեն կապված է հասարակական կյանքի երևույթների հետ, Բացառելով այդ պատկերների իդեական-հասարակական բովանդակությունը, համարելով նրանք միանգամ ընդմիշտ քարացած ֆորմուլաներ, բացառել կամ անուշադրության են մատնել նաև նրանց կոմպոզիցիոն նշանակությունը։ Այստեղից էլ այն թյուր կարծիքը էպոսի սյուժեի մասին, որպես ստեղծագործության կոմպոզիցիայի հիմք, թե նա իրենից ներկայացնում է մեծ մասամբ որպես էպիգոդ։ Նովալիսը այդ սահմանել է հետեւյալ կերպ՝ «Էպոսը երկարում է, ոռմանը աճում է»։ Այսպիսի սահմանումներն ու գնահատումները արժեքագրել են, ինչպես էպիկական երդերի սյուժեներն առհասարակ, այնպես էլ հատկապես հերոսավելերի պոետական տեխնիկան և նրանց արտահայտչական միջոցները, համարելով դրանք վերին աստիճանի պրիմիտիվ, հետեւապես և անարժեք։ «Էպոսում,— սրում Կրավցովը,— անցքերը ծավալվում են խրոնոլոգիական կարգով, որը կրկին վկայում է պոետական տեխնիկայի պրիմիտիվմի մասին»:¹ Եզրակացությունը պարզ է, եթե էպոսի պոետական տեխնիկան պրիմիտիվ է, արտահայտչական միջոցներից մի քանիսը ֆորմուլաներ են, եթե անցքերի խրոնոլոգիական ծավալման հետեւանքով վեպը երկարում է և ոչ աճում, ապա խոսք շի կարող լինել նրա ճանաչողական արժեքի մասին։ Այսպիսով, վեպը անուղղակի կերպով նույնացվել է ավանտյուրա-ֆանտաստիկական ոռմանի հետ, որն, իրոք, կազմը ված է մեկը մյուսին հաջորդող, մի շարք առանձին, իրար հետ բոլորովին կապ չունեցող դեպքերից ու անցքերից։ Այսպիսով վեպում ծավալվող էպիգոդները համարվել են ներքնապես ոչ միասնական, նրանց կապը արտաքին, պատահական ու դեկորատիվ։ Վիպասանները, գրում է Պոսպելովը, վեպում «Սովորաբար մի անցքը պատմում էին մյուսի հետեւից, և ըստ որում դրանք չէին կապում ներքին կապով և ոչ մի կերպ չէին համոզում լսողին»:²

Հայ ժողովրդական վեպի կոմպոզիցիայի և տոհասարակ ձևավորող մի-

¹ Կրավցօվ—«Сербский эпос», Москва—Ленинград, 1933, стр. 13.

² Поспелов Г. Н.—«Теория литературы», Госиздат, Москва, 1940, стр. 176

շոցների մասին խոսելիս, մանրամասն ցույց կտրվի հիշյալ դրութների ոչ ճիշտ լինելը։ Այժմ նկատենք միայն, որ անդամ ալեգորիկ և սիմվոլիկ պատկերների կոմպոզիցիոն մի քանի առանձնահատկությունները խոսում են հօգուտ վեսլի կուռ կառուցվածքի և նրանում ծավալվող դեպքերի օրգանական կափի մասին, և դրանով իսկ ժխտում էպիզոդների պատահական ու մեխանիկական բարդման վերսիան։

Եվ իրոք, երբ խորանում ենք ալեգորիկ և սիմվոլիկ պատկերների վեպում բռնած տեղի ու հաջորդականության հարցի մեջ, հանգում ենք այն եզրակացության, որ՝ այդ պատկերները սյուժեի զարդացման ընթացքում կատարում են առաջին՝ հերոսների գործողությունները, դեպքերն ու հանդամանքները իրար հետ իշապելու և նրանց ընթացքը պատճառաբանելու դեր։ Երկրորդ՝ ուրիշ ավելի նշանակալից գործողություններ առաջացնելու և հաջորդ դեպքերի նկատմամբ սպասողականություն կամ հետաքրքրություն շարժելու դեր, և երրորդ՝ հանգույցի ու հետևապես հաջորդ սիտուացիաների պոտենցիան իրենց մեջ կրելու դեր։ Նախ տեսնենք առաջինը։

1) Սանասարին հասցեագրված Քառսուն ճող Ծամի ալեգորիկ սիրագիրը, որով սկսվում են այդ ճյուղի երկրորդ մասի գործողությունները, կապում է առաջին մասը երկրորդի հետ և դառնում Սասնա բերդի կառուցումից հետո ծավալվող անցքերի ելակետը։ Առաջին հայացքից այն տպավորությունն է ստացվում, թե բերդի կառուցումով պետք է ավարտվի պատումը, որովհետև Քառսուն ճող Ծամի ալեգորիկ սիրագիրը տրամաբանորեն չի կապվում նախորդի հետ և, որ վիպասանը պատահական էպիզոդով ուղակի «երկարացնում» է վեպը։ Սակայն, այդպես է միայն առաջին հայացքից։ Իրականում բերդի կառուցմանը հաջորդող ալեգորիկ նամակը նախապատրաստվում է երկու եղբայրների հերոսական գործողությունների ընթացքում։ Նրանց հերոսական արարքների համբավը լսելուց հետո է, որ Քառսուն ճող Ծամը սիրու «Սիվ հիրդիսներով» ապարանք-բանտից ազատվելու ակնկալությամբ՝ նամակ է ուղարկում, որոշ պատումներում Բաղդասարին, իսկ որոշ պատումներում՝ Սանասարին։

Սանասարը ձեն վուր ընկավ տնեն,
Խոսք-խաբար խասավ Քառսուն ճող Ծամին։
Իւավ մեկ դիր կրեց... (շարունակութ. տես վեպում):

«Ա. Ծ.», Ա. 318

Այսպիսով սիրագիրը չի բերվում բերդի կառուցումից կամ կուապաշտ թագավորին սպանելուց և նրա զորքի դեմ եղբայրների մղած կովից առաջ, այլ բերդի կառուցումից հետո, որովհետև Սանասարն իրեն ամեն տեսակ շարիքի և բռնության թշնամի դրանորվում է հիշյալ ու մի քանի այլ գործողություններով։ Այժմ, քանի որ, ինչպես գիտենք, սիրագրի առթիվ Քառսուն ճող Ծամի ազատագրման համար Պղնձե քաղաքում Սանասարի մղած կոկվը ըստ էության շարիքի և բռնության դեմ մղվող կոփվ էր, ապա պետք է պատկերվեր այնպիսի տեղ և այն ժամանակ, երբ նա հիմնականում իրեն դրսեղած կլիներ որպես ազատության համար բռնության դեմ մարտնչող հերոս, որպես կյանքի համար մահվան դեմ մաքառող հերոս։ Նա, որպես այդպիսին, ներկայանում է բերդի կառուցումից հետո և հենց այնտեղ էլ դրվում սիրագիրը՝ բռնության նկատմամբ անհաշտ լինելու գիծը զարգացնելու և նրա կերպարն ամբողջացնելու նպատակով։ Այս իմաստով է, որ Քառսուն ճող Ծամի ալե-

գորիկ սիրագիրը հանդիսանում է նախորդ գործողությունների տրամաբանական արդյունքը և Բերդի կառուցումից հետո ծավալվող էպիզոդների սկիզբը:

Սիրագրին հաջորդում է երկու եղբայրների ալեգորիկ կովի պատկերը, որի մեջ ժողովուրդը զարգացրել է գեղեցիկը «կտրիճին» գաղափարը: Այդ պատկերի գոյությունը նույնպես պատճառաբանվում է և որ կարևորն է, կապվում նախորդի հետ ոչ ձևական հնարքով, այլ բովանդակությամբ, էապես: Այս, տեղ չէր գտնի վեպում, եթե շիներ առաջինը. ճիշտ այնպես, ինչպես տեղ չէին գտնի Սանասարի հերոսական գործողությունները, եթե չորվեր կնոջ սոցիալական ստրկությունը բացահայտող «սիվ հիրդիսներով» ապարանք-բանտի, նրա «կտուրին» «Ճրագի» պես վառվող ոսկե խնձորի և կնոջ աղատագրուման ճանապարհին դրված արգելքի՝ «գուրզի» ալեգորիկ պատկերը: Վերջինիս հիմքի վրա բոնության դեմ մղվող կովում եղբորն օգնելու և հաղթանակն ապահովելու համար, ալեգորիկ մի այլ պատկերում վիպասանը Պղնձե քաղաք է տեղափոխում Բաղդասարին:

Բաղդասար էլավ տուս, տեսավ ամբը մթներ ա-

եկավ տուն, ասաց.— Մարե,

Ես տերթամ, յըմ ախպեր նեղ տեղն ա.

Կամ կը սպանեն, կամ կը մեռնի:

«Ա. Ծ.», Ա 852—853

Կամ

«Ես իրիշկիմ յըմ ախպոր ամբ, տեսնայնք՝ ի՞նչպես առ
իրիշկաց, ամբը մթներ էր,
էլ լոս չկար ամբի մեշ.
Էլաց, էկավ տոմ... և այլն:

«Ա. Ծ.», 856

Եղբորն օգնության շտապող Բաղդասարը ճանապարհին հանդիպելում է այնպիսի ալեգորիկ դեպքերի (սարից սար թոշող և խոսող տղվեսը, գետի ջուրը կլանող, բայց դարձյալ «վայ ծարավ մեռա» կանչող մարդը և այլն), որոնք առնչվում են Պղնձե քաղաքում կատարվող դեպքերի հետ և իրենց շտրագուշակությամբ նրա մեջ սաստկացնում եղբորը կորցնելու վախը: Սրանով է պատճառաբանվում, ինչպես Պղնձե քաղաքից դուրս, այնպես էլ ներսում, Բաղդասարի կատարած գործողությունները: Բաղդասարն ապահովում է հաղթանակը: Սիմվոլիկ վիշապի սպանությունից, թագավորի առաջարկած ալեգորիկ արգելքների հաղթահարումից և գոմշանման «փահլիվանների» պարտությունից հետո, կրկին շեշտվում է Պղնձե քաղաքի պարիսպների տակ Քառսուն ճող Շամին սպասելուց ծերացած ու «Չուր մեջք ինի քար տարցած» մարդկանց նկարագիրը, որովհետև այդ պատկերների հակադրությունը ըստ էության բխում է գեղեցիկը «կտրիճին» գաղափարից, որն իրականացնում է վիպասանը եղբայրների հերոսական արարքներով:

Այսպիսով, Քառսուն ճող Շամի սիրագիրը էապես բխելով նախորդ գործողություններից, իր հերթին պատճառաբանում է եղբայրների կովի միջադեպը և Քառսուն-ճող Շամի վիճակի մոայլ նկարագիրը. իսկ վերջինս էլ Սանասարի հերոսական գործողությունները, նրա օրհանական վիճակը, որը մի ուրիշ պատկերի օգնությամբ Պղնձե քաղաք է տեղափոխում Բաղդասարին:

Եվ այնուհետև, եղբայրների պատճառաբանված հաղթանակը հասցնում է Քառոսուն ճող Շամին ազատագրած՝ «խնձուր իրենց ծուց» դրած եղբայրների և «խնձուրին» (=աղջկանը) սպասելուց ծերացած մարդկանց վարքագծի հակադրության, որով և վերջանում է պատումը:

Ուրեմն կարելի է ասել, որ հիշյալ պատկերները վեպում կատարում են ծավալվող դեպքերն ու հանդամանքները էապես իրար շաղկապելու և հերոսների արարքները պատճառաբանելու ֆունկցիա:

2) Այդ ֆունկցիան նրանց շի զրկում ինքնուրույնությունից: Նրանք իրենց նշանակությամբ մնում են ամբողջական ու լրիվ ինքնուրույն, և որպես այդպիսին, նախապատրաստում ուրիշ ավելի նշանակալից և ինքնուրույն գործողություն: Այդ երեաց վերե, վեպի առաջին ճյուղի երկրորդ մասի մի քանի պատկերները վերլուծելիս, այդ երեսում է նաև վեպի երրորդ ճյուղում, սակայն, ավելի ցայտում ու ընդգծված:

Վիպասանները հերոսների նախապատճությամբ ստեղծելով հարկահանության թանձրացած պատկերը, հիմք են դնում դրանից հետո ծավալվող, իրենց նշանակությամբ միանգամայն ինքնուրույն բոլոր գործողություններին: Հարկահանության պատկերը, ուր հանդուցվում են Դավթի և Մորա Մելիքի (=ժողովրդի և օտար զավթիչների) միջև եղած բացահայտ հակասությունները, ինչպես տեսանք, արտացոլում են հայ ժողովրդի դարավոր սոցիալական ստրկությունը, օտար զավթիչների կողմից կատարվող տեսական կողոպուտը: Այս շափով այն ամբողջական է և ինքնուրույն: Վերջինս հանդիսանալով Դավթի հերոսական գործողությունների հիմքը (բանտարկված կանանց և աղջիկներին ազատելը, Կողբադինին և մյուս հարկահաններին պատուհասելը և այլըն) նախապատրաստում է գաղաղած թշնամու կողմից «Մարութա» բանձր Աստվարածնի» ավերման սիմվոլիկ պատկերը, ուր դրվում է հայ ժողովրդի հոգեղան կողոպուտի ինքնուրույն գաղափարը: Սրան, միանգամայն տրամադրանական կերպով, հաջորդում է Մարութիկի վերաշինուածը և հիմքում Դավթի «իսանշալը» դնելու էպիզոդը, որը արտացոլում է ինքնուրույն նշանակություն ունեցող այն միտքը, թե օտար թշնամու հարձակումից և ստրկության շղթաներից կարելի է ազատ մնալ զենքը ձեռքին նրա դեմ հերոսաբար մարտնչելու միջոցով միայն: Այս պատկերը նախապատրաստում է Մորա Մելիքի հարձակումը և Սասնա դաշտում վրաններ զարկած նրա բանակի հիպերբոլիկ և ալեգորիկ նկարագիրը: Վերջինս իր հերթին հանդաս է բերում պառագ կնոջը, որը մեծագույն հոգատարությամբ հետևում է Դավթի ռազմական պատրաստություններին: Այստեղ մեկը մյուսին հաջորդում են այնպիսի պատկերներ և էպիզոդներ (Թուր Կայծակի, Քուռիկի Զալալիի և խաչ պատրագնի) ձեռք բերումը, Կաթնաղբյուրի ջուրը խմելը, ալեգորիկ պողպատե սյան կտրելը և այլն), որոնք նախորդ պատկերների արդյունքը լինելով հանդերձ, իրենց նշանակությամբ ինքնուրույն են: Որպես այդպիսին, նրանք հիմք են դառնում Մորա զորքի կոտորածը բացահայտող և դրան հաջորդող Մորա Մելիքի սպանության պատկերների համար: Եթե նախորդ պատկերում զարգացվում էր թշնամու դեմ բմբուտ լինելու դադարիարք, ապա հաջորդ պատկերներում, հատկապես Մորա Մելիքի սպանությունը բացահայտող էպիզոդում զարգացվում է նոր և վեպի սյուժետային գծի տրամաբանական եղբակացությունը հանդիսացող այն գաղափարը, թե ժողովուրդը հզոր է, ինչպես Դավթի իր Մարութիկով, «իսաշ պատրագ»

նով» ու թուր Կայծակով, և որ նրան հնարավոր չէ ստրկացնել: Եվ ապա բոլոր նրանք, ովքեր փորձ կանեն ոտնահարել նրա տղատությունը, շղթայել կամ խաբեցությամբ հորը ձգել, կմոխրանան այնուհետ, ինչպես Մսրա Մելիքը ամենազոր թուր Կայծակից:

Բերած օրինակներն, այսպիսով, բավական են համոզվելու, որ իրար հաջորդող յուրաքանչյուր պատկեր իր նշանակությամբ լրիվ ինքնուրույն է ու ամբողջական: Այդպիսին լինելով հանդերձ, նրանցից մեկը նախապատրաստում է մի ինքնուրույն և ամբողջական գործողություն, երկրորդը մի ուրիշ նույնքան ինքնուրույն և ամբողջական պատկեր, երրորդը մի այլ, և այսպես մինչև ստեղծագործության վերջը:

Բայց այդ՝ հիշյալ պատկերների կամ գործողությունների մի կողմն է միայն: Մյուս ոչ պակաս կարեոր կողմը՝ տվյալ պատկերի բովանդակության ծավալման ժամանակ կարդացողին կամ լսողին սպասել տալու, այսինքն, հաջորդ գործողության նկատմամբ հետաքրքրություն շարժելու առանձնահատկությունն է, որն անխղելիորեն կապված է այս կամ այն պատկերում նոր, ինքնուրույն պատկեր նախապատրաստող օրինաշափ երեվութի հետ, որ հենց սպասողականության հիմքն է: Քառուն ճող Ծամի սիրագիրն, օրինակ, ինքնին մտածել է տալիս նաև ստեղծված հանգամանքի վախճանի մասին: Այդ սպասողականությունն ուժեղանում է եղբայրների կովի միջանկյալ պատմությամբ, և հատկապես Քառուն ճող Ծամի «ապարանքի» սիմվոլիկ նկարագրությամբ, որն իր հերթին վառում է կարդացողի երևակայությունը գալիք անցքերի նկատմամբ: Վեպի երրորդ ճյուղում հարկահանության պատկերը և դրա հետ կապված Դավթի վճռական ու համարձակ գործողությունները (Կողբադինին պատուհասելն ու խայտառակ ձևով Սասունից վոնդելը) ոչ միայն շարժում են կարդացողի հետաքրքրությունը, այլև ստիպում անհամբեր սպասել գալիք անցքերին, այն բանին, թե ինչպես կվերաբերվի դրան բռնակալ Մսրա Մելիքը: Դավթի և Մսրա Մելիքի միջև եղած հակասությունը խորանում, նրանց հարաբերությունները լարվում և հետեւապես ուժեղանում է կարդացողի հետաքրքրությունը Մարութիկի ավերման և պատահմամբ կենդանի մնացած տիրացուի կողմից սպանված վանականներից մեկի արյունոտ շապիկը Դավթի առաջ ձգելու փաստով: Մրանց հիմքի վրա տրվում է Մարութիկն ավերող Կողբադինի ջոկատի սպանության և Մսրա Մելիքի ղորահավաքի պատմությունը, որը կոնկրետանում է Սասոն դաշտում վրաններ զարկած Մսրա զորքի քանակն արտացոլող պատկերում: Այս, բնականաբար, հետաքրքրություն է առաջացնում մյուս բանակում՝ Սասունում կատարվող իրադրությունների նկատմամբ: Դավթի զինավառումից և Մսրա զորքի վրա հարձակվելուց հետո էլ շի թուղանում հետաքրքրությունը: Այս անդամ կարդացողը կամ լսողը սասունցինների նման անհանդիստ սպասում է կովի ելքին: Դավթի վիճակի հանկարծական փոփոխությունը (հորն ընկնելը) մթագնում է կովի ելքը, ստեղծելով նոր հետաքրքրություն հաջորդ անցքերի նկատմամբ: Կարդացողի հետաքրքրությունն ավելի բորբոքվում է Դավթի վիճակը առարկայացնող Հովանի սիմվոլիկ երազներով: Նոր, իր նշանակությամբ միանդամայն ինքնուրույն ու ամբողջական երազ պատկերով առաջացած սպասողականությունն ու հետաքրքրությունը հաջորդ մի շարք էպիզոդների միջոցով շարունակվում է

մինչև «քառուն գազ հորում, քառուն գոմշու կաշիների ու ջաղացքարերի տակ կուշ եկած Մսրա Մելիքի սպանությունը»:

3) Այնուհետև, պետք է նկատել, որ իր նշանակությամբ ինքնուրույ սիմվոլիկ պատկերում, ինչպես նախապատրաստվում է ուրիշ ավելի նշանակալից գործողություն և հետաքրքրություն հաջորդ անցքերի նկատմամբ, այն պես էլ նախապատրաստվում է գործողությունների արագ զարգացման ուժ, ծավալվող դեպքերի դիմամիկան։ Դիմամիկան դրսեորվում է տրամաբանորե իրար հաջորդող պատկերների ու սիտուացիաների մեջ։ Այս հանդիսանալու նախորդի արդյունքը, միաժամանակ իր մեջ կրում է հաջորդ սիտուացիաներ պոտենցիան։ Այսպես, օրինակ, հարկահանությանը հաջորդող դեպքերի արա զարգացումն ու ծավալումը հիմք է դառնում Մսրա Մելիքի զորահավաքի Սասունի վրա կատարած հարձակումը պատկերող անցքերի արագ զարգացման համար։ Կամ, Հովանի՝ արագությամբ իրար հաջորդող երազները, որ բխում են Դավթի վիճակի հանկարծական փոփոխությունից, իրենց մեջ կրելով հաջորդ դեպքերի ծավալման պոտենցիան, շեշտակիորեն առաջ են մղու գործողությունները, և դրանով իսկ արագացնում Դավթի և Մսրա Մելիքի միջ եղած հակասության (=հանգույցի) լուծումը։ Իրոք, տեսնում ենք, որ քնի արթնացած երազակար Հովանը անմիջապես գոմ է մտնում, անհանգիստ կարճ խոսակցությունից հետո ընտրում ձիերից մեկին, նստում այն, ակըն թարթում կանգնում «կոռու դաշտի գլոխ» ու ծայն տալիս Դավթին։ Վայրից նում յոթ օրվա ճանապարհ կտրող նրա ծայնը լսելուց հետո, Դավթին անմի ջապես թուր կայծակով փշում է «Քառուն ջաղացքարերը», դուրս գալի հորից, սլանում Մսրա Մելիքի վրանը, վերկացնում քնից ու սկսում կոիվը։

Այսպիսով էպոսի պատկերները, հակառակ եղած պատահական սիալ կարծիքների, վեպում կատարում են՝ 1) ծավալվող դեպքերու ու հանգամանքներն էապես իրար շաղկապելու և հերոսների արարքների պատճառաբանելու դեր։ 2) իրենց նշանակությամբ լրիվ ինքնուրույն լինելու։ Հանդերձ նախապատրաստում են ուրիշ ավելի նշանակալից գործողություններ միաժամանակ առաջացնում սպասողականություն կամ հետաքրքրություն հաջորդ անցքերի նկատմամբ։ և վերջապես՝ 3) իրենց մեջ կրում են գործողությունների արագ զարգացման ուժը՝ ծավալվող դեպքերի դիմամիկան, որ կազմում է վեպի կարևոր արժանիքներից մեկը։



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220030996

(204)

